Ճանաչել գիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՓԱՐ

28-29(351)
05.09.2013
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍԼԱՎԱ ԱՍՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ ՈՒՂԵՐՁԸ

Հարգելի գործընկերներ +++

Հայ ժողովուրդն իր բազմադարյան պատմության ընթացքում միշտ էլ առանձնահատուկ տեղ է հատկացրել գիտելիքին ու կրթությանը: Եվ պատահական չէ, որ ազգի հարատևման կարևորագույն պայմաններից մեկը համարվում է հենց դպրությունը:

Անգամ մեր ժողովրդի համար ամենածանր փորձությունների ժամանակ առաջնահերթվել է կրթությունը, որին պարտադիր զուգակցվել է հայրենասիրական դաստիարակությունը: Այս կարևոր բաղադրիչը եղել ու մնում է կրթական խնդիրների առանցքում՝ առավել նպատակասլաց դարձնելով բնագավառի զարգացմանն ուղղված մեր նախաձեռնությունները:

ԼՂՀ իշխանությունները, մշտապես ուշադրության կենտրոնում պահելով կրթության ու գիտության խնդիրները, տարեցտարի ավելի շատ ներդրումներ են կատարում այս ոլորտում, որի իրական արտահայտությունը կրթական հաստատությունների շենքային պայմանների և ուսումնատեխնիկական բազայի շոշափելի բարելավումն է: Տվյալ պայմաններում մեր գերխնդիրը մնում է ուսման որակի շարունակական բարձրացումը, և այսօր դրան են ուղղված հանրապետության կրթության և գիտության նախարարության ջանքերը: Վստահ լինենք, որ հաջողություններն են ուղեկցելու մեր բոլոր ձեռնարկումներում:

Շնորհավորում եմ նաև ձեզ, սիրելի դպրոցականներ, հերթական ուսումնական տարին ոտք դնելու կապակցությամբ և առանձնահատուկ՝ դպրոցի շեմին առաջին անգամ ոտք դնող առաջին դասարանցիներին ու նաև՝ միջին մասնագիտական և արհեստագործական, բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողներին, մաղթում համառ կամք, անդուլ պայքար գիտելիքներ ձեռք բերելու ճանապարհին:

Գրի ու դպրության օրվան անմիջապես հաջորդում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման տոնը, որը ոչ միայն արցախահայության, այլև համայն հայության տոնն է: Սեպտեմբերի 2-ի նվիրական գաղափարով տոգորված՝ հայ քաջորդիները կարողացել են Արցախի ժողովրդին իրական ազատություն բերել: Անհրաժեշտ է մեր հերոսների արյամբ նվաճված հաղթանակը պետականաշինության հետագա գործընթացում ամրապնդել նորանոր հաջողություններով, և այդ գործում, անշուշտ, շեշտված է նաև կրթության ու գիտության ոլորտի աշխատողների դերը:

Նոր ուսումնականի մեկնարկի և ԼՂՀ հռչակման 22-րդ տարեդարձի առթիվ իմ շնորհավորանքները հղելով բոլորին՝ մաղթում եմ քաջառողջություն, նորանոր հաջողություններ աշխատանքում և ուսման մեջ:

ՍԼԱՎԱ ԱՍՐՅԱՆ
ԼՂՀ կրթության եւ գիտության նախարար

ԲԱՐԻ ԵՐԹ, ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԿՇԱՐՈՒՆԱԿՎԻ ՊԱՅՔԱՐԸ ՈՒՍՄԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

*(Նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ «Լուսարարի» հարցերին պատասխանում է ԼՂՀ կրթության և գիտության նախարար **Սլավա ԱՍՐՅԱՆԸ**)*

- Պարոն Ասրյան, նախ թույլ տվեք, ի դեմս Ձեզ, շնորհավորել կրթական համակարգի բոլոր աշխատողներին նոր՝ 2013-2014 ուսումնական տարին սկսելու կապակցությամբ: Նկատի ունենալով հերթական ուսումնական տարվա մեկնարկի կարևորությունը մեր երկրի կյանքում, խնդրում ենք պատասխանել առաջին և ավանդական հարցին. ինչպե՞ս ենք սկսում նոր ուսումնական տարին, ի՞նչ նախապատրաստական աշխատանքներ են տարվել:

- Շնորհակալություն՝ շնորհավորանքի համար: Սեպտեմբերի 1-ին հանրապետությունում իրենց դռները կբացեն 219 հանրակրթական դպրոցներ, այդ թվում՝ Երևանի պետհամալսարանին առընթեր՝ Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղը, Ք. Իվանյանի անվան ռազմամարզական վարժարանը, Շուշիի Դ. Ղազարյանի անվան երաժշտական մասնագիտացված դպրոցը: Կարելի է ասել, որ նախապատրաստական բոլոր անհրաժեշտ աշխատանքներն իրականացվել են նոր ուսումնական տարին կազմ ու պատրաստ սկսելու համար: Դպրոցական շենքերի մասով ասենք, որ ընթացիկ վերանորոգումներ են կատարվել. առաջնահերթություն է տրվել այն կրթօջախներին, որոնք ավելի վատթար վիճակում էին: Հիմնանորոգվել են Մարտունու հ.1 միջնակարգ հոսքային, Քաշաթաղի շրջանի Արտաշավիի միջնակարգ դպրոցները: Մի շարք բնակավայրերում դեռ շարունակվում են դպրոցական նոր շենքերի կառուցման, գործող դպրոցների վերակառուցման և հիմնանորոգման աշխատանքները:

Նյութատեխնիկական հագեցվածության առումով նոր համալրում դեռ չենք ստացել, բացառությամբ Ստեփանակերտի հանրակրթական դպրոցներում բացվող նախադպրոցական խմբերի, որոնց գույքով ապահովումն իրականացվում է: Մեկ-երկու ամսվա ընթացքում նաև մի շարք դպրոցներում պակասող գույքի հարցը կլուծվի «Հայաստան համահայկական հիմնադրամի» միջոցներով:

Սեպտեմբերի 1-ին շահագործման կհանձնվի Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցի նոր շենքը, ինչին երկար ենք սպասել:

- Նորություններ կլինե՞ն նոր ուսումնականում:

- Որպես այդպիսիք՝ կարելի է ասել՝ ոչ, պարզապես կշարունակվեն հանրակրթության մեջ իրականացվող բարեփոխումները: Եթե բովանդակային առումով մենք առանձնակի խնդիրներ չունենք, ապա մեթոդաբանական և գլխավոր խնդրի՝ ուսման որակի բարձրացման ուղղությամբ անելիքները շատ են, որոնց իրականացման ուղղությամբ էլ կծավալվեն աշխատանքները:

Ուսուցիչների օգոստոսյան խորհրդակցություններում հանգամանալից վերլուծվել են անցած ուսումնական տարում կատարված աշխատանքները և առաջադրվել խնդիրները, որոնք պետք է իրականացվեն առաջիկա ուսումնական տարում: Իհարկե, աշխատանքների հիմնական առանցքն ուսման որակի բարձրացումն է, որը տևական գործընթաց է:

- Իսկ ի՞նչ վիճակում է դպրոցների տեխնիկական հագեցվածությունը:

- Նոր ուստարում շարունակվելու են աշխատանքները տեղեկատվական տեխնոլոգիաների համալրման և հատուկ ծրագրերի իրականացման ուղղությամբ:

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից համակարգիչներ են տրվել մի շարք դպրոցների, և պայմանավորվածության համաձայն՝ այս գործընթացը կշարունակվի: Հավանաբար, մինչև հունվար ամիսը տեխնիկապես կհամալրենք այն դպրոցները, որոնք համակարգչային կաբինետները թարմացնելու անհրաժեշտություն ունեն: Այս առումով նաև ծրագրային մի շարք խնդիրներ են իրականացվում «Նոր ուսումնական ռազմավարություն» (ՆՈՒՌ), մեկ աշակերտին՝ մեկ համակարգիչ ծրագրի շրջանակներում, նախատեսվում է եկող ուսումնական տարում այդ ծրագրում ընդգրկել նաև հանրապետության շրջկենտրոնների դպրոցները: Արդեն ավարտվել են ուսուցիչների վերապատրաստման աշխատանքները: Մեկուկես-երկու ամսից կստանան համակարգիչները:

Իսկ ընդհանրապես, անցած տարվանից մեր դպրոցականներին նոր տեխնոլոգիաների հիմունքներին ծանոթացնելու և այդ աշխատանքներին ներգրավելու համար մի շարք միջոցառումներ են իրականացվել, հատկապես ռոբոտիքսի՝ ռոբոտաշինության հիմունքներին աշակերտներին հաղորդակից դարձնելու ուղղությամբ:

Մասնագետները վերապատրաստման դասընթացներ են անցել Երևանում՝ հայաստանյան համապատասխան միջազգային կառույցների միջոցով, և խնդիրն այն կլինի, որ մեր դպրոցներն աստիճանաբար մասնակից լինեն այդ ծրագրին, որը տնտեսության զարգացման գործում կարևոր նշանակություն կունենա: Բացի այդ, մենք կապեր ունենք Հայաստանի տարբեր դպրոցների հետ, հատկապես՝ տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի ոլորտում փորձի փոխանակման, ծրագրավորման հետ կապված, որոնք կիրականացնենք համատեղ: Մի խոսքով, դպրոցում նոր տեխնոլոգիաներին տիրապետելու հիմքեր են ստեղծվում, որպեսզի հետագայում, նաև կապված բուհական կրթության հետ, ապահովվի բավարար մակարդակ: Ինչպես գիտեք, «Սինոփսիս Արմենիա» կազմակերպության հետ կնքված համաձայնագրով Արցախի պետական համալսարանն այս տարվանից կսկսի մասնագետների պատրաստումը միկրոէլեկտրոնիկայի գծով: Տեղեկատվական կառավարման ոլորտում ևս պայմանավորվածություն կա ամերիկյան կազմակերպությունների հետ, և նրանց ֆինանսավորմամբ այդ մասնագիտության ուսանողները կուսումնասիրեն արդիական առարկաներ և հետագա ընդհանուր խնդիրների իրականացման անմիջական մասնակիցը կդառնան:

☞2

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ԿՇԱՐՈՒՆԱԿՎԻ ՊԱՅՔԱՐԸ ՈՒՍՄԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

1 ☞ *- Ուսումնական գործընթացի հաջողությունները, անկասկած, նախ և առաջ պայմանավորված են մասնագետների պատրաստվածությամբ: Այս առումով ի՞նչ կասեիք:*

- Դասի արդյունավետության և որակի բարձրացման համար տարվա ընթացքում իրականացվել են ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, որ նաև նպատակ է հետապնդում նրանց հետագա ատեստավորման: Այդ փուլերն ավարտված են, ուսուցիչների թվի 20 տոկոսի չափով նախարարությունը տարեկան վերապատրաստում և ատեստավորում է իրականացնում: Նաև կազմակերպել ենք վերապատրաստումներ «Շախմատ» առարկայի ուսուցիչների համար: Այս տարի այդ առարկան կուսուցանվի բոլոր դպրոցների 3-րդ դասարաններում:

Գտնում ենք, որ այն իր տեղը կգտնի երեխաների ընդհանուր տրամաբանության զարգացման մեջ, նաև շախմատի՝ ոչ միայն որպես խաղի, այլև արվեստի առումով երեխաների մոտ համապատասխան կարողությունների ձևավորման գործում:

- Անդրադառնանք դասագրքերի հարցին, որն ուսումնական գործընթացը հաջող իրականացնելու կարևոր գործոն է:

- Այս ուսումնականը ծրագրերի և դասագրքերի փոփոխության հաջորդ տարին է. անցած տարվանից գործածության էին դրվել 5-9-րդ դասարանների նոր պետական ծրագրերը, դրանց համապատասխան հրատարակվել է որոշ դասագրքերի խմբաքանակ, և այս տարի շարունակվում է այդ դասագրքերի շարքի տպագրությունը: Եկող տարվա ընթացքում այդ օղակի բոլոր դասագրքերի տպագրությունը կավարտվի, իսկ դա սոսկ տպագրություն չէ, իրականացվում է նաև բեռնաթափման խնդիրը, այսինքն՝ դասագրքերը համապատասխանեցվում են թեթևացված ծրագրերին, ինչը կունենա իր դրական ազդեցությունը: Եվ տարիներ շարունակ բողոքները դասագրքերի, ծրագրերի բարդության, անմատչելիության մասին աստիճանաբար իրենց լուծումը կստանան: Ներկա դրությամբ ձեռք են բերվել մի շարք դասագրքեր, այդ թվում՝ մեթոդական ուղեցույցներ, ուսուցչի ձեռնարկներ, 1-ին և 2-րդ դասարանների մայրենիի և ռուսերենի ուսուցման աշխատանքային տետրեր: «Իմ գրադարանը» շարքը համալրվել է ևս 17 անուն գրականությամբ: Դրանք հիմնականում հայ և համաշխարհային դասականների ծրագրային երկերն են: Այս տարի ձեռք կբերենք նաև 10-11-րդ դասարանների «Հայ գրականություն», ինչպես նաև ունենք նոր վերահրատարակությամբ «Հայոց եկեղեցու պատմություն» դասագրքերը 6-9-րդ և 10-11-րդ դասարանների համար:

Բոլոր դասագրքերը սեպտեմբերի 1-ի վրա ստացված են և կառաքվեն շրջանները:

Նշեմ, որ բոլոր դասագրքերը և գեղարվեստական գրականությունը ձեռք են բերվել պետական միջոցների հաշվին: Ասեմ նաև, որ առաջին դասարան հաճախող երեխաներին, որոնց թիվը նախնական տվյալներով 2270 է՝ նախորդ տարվանից շուրջ 100-ով ավել, կառավարության կողմից հատկացվող 20-հազարական դրամ գումարները բոլոր շրջաններում վաղօրոք տրամադրվել են:

- Նոր ուսումնական տարվա շեմին «իրարանցում» կա նաև նախադպրոցական տարիքի երեխաների առումով...

- Այո, այս տարվա կարևոր միջոցառումը՝ կապված Ստեփանակերտ քաղաքի մանկապարտեզների բեռնաթափման և հանրակրթական դպրոցներում նախադպրոցական խմբերի ստեղծման հետ, դպրոցներում ստեղծված նախադպրոցական խմբերն են: Մայրաքաղաքի հ. 2, 9 և 10 դպրոցներում ստեղծվում են մանկապարտեզային պայմաններ: Խմբերը կգործեն օրական 9 ժամ տևողությամբ, զուգահեռ կլինեն նաև 6-ժամյա տևողության խմբեր ինչպես այդ, այնպես էլ մյուս դպրոցներում՝ հ. 1, 3, 4, 5, 6, 7, 12, որտեղ կընդգրկվեն մինչև դեկտեմբերի 31-ը 5 տարին լրացած երեխաները: Մանկապարտեզներից համապատասխան տարիքի երեխաները հանվել են, նրանց կփոխարինեն 2-4,5 տարեկանները: Սրանով ինչ-որ չափով թեթևացրել ենք մանկապարտեզների խտության աստիճանը և հնարավորություն ստեղծել ընդգրկելու դրանց կարիքն զգացող երեխաներին: Այդ աշխատանքները կշարունակվեն: Առաջիկա 2-3 ամսվա ընթացքում մանկապարտեզային տիպի ևս 2 շենք կվերակառուցվի Հայկավան և Ստեփգէս թաղամասերում, իսկ հետագայում հիմնանորոգման աշխատանքներ կկատարվեն հ. 6 և 11 դպրոցների նախկին շենքերը մանկապարտեզների վերափոխելու ուղղությամբ: Այս տարբերակով ուզում ենք լուծել նախադպրոցական տարիքի երեխաների՝ այդ հիմնարկներում տեղավորման չարչրկված հարցը:

Իհարկե, նման պայմանների առկայության դեպքում շրջանային որոշ համայնքներում ևս կբացվեն այդպիսի խմբեր, և աստիճանաբար կիրականացնենք պարտադիր նախադպրոցական կրթությունը:

Ցավոք, կան դպրոցներ, որտեղ այդ տարիքի երեխաները քիչ են, և առայժմ չենք կարողանում նրանց ընդգրկել: Հետագայում ինչ-որ ձևով պայմաններ կստեղծենք՝ նրանց հարցը ևս լուծելու:

- Իսկ ինչպե՞ս է լուծվում նախադպրոցական հիմնարկներն ու դպրոցները մասնագետ կադրերով ապահովելու հարցը:

- Այս ուսումնական տարվանից մասնագետների ընդունման նոր կարգ է գործում, համաձայն որի՝ բոլոր առարկաների մասնագետները թափուր տեղերի առկայության դեպքում աշխատանքի են վերցվում միայն մրցույթով, այդ թվում՝ նախադպրոցական կրթություն իրականացնող հաստատությունների դաստիարակները: Ներկայումս Ստեփանակերտում և շրջաններում ընթանում են այդ մրցույթները: Ստեփանակերտ քաղաքում շատ մեծ թվով մասնագետներ են դիմել, բարձր կարգի մրցույթ է անցկացվում, բայց ունենք նաև գյուղեր, որտեղ առայսօր հայտեր չեն ստացվել, իսկ Քաշաթաղի և Շահումյանի շրջաններում դպրոցներ կան, որոնք չնայած մասնագետներ չունեն, բայց չկան նաև համապատասխան բնակարաններ, որպեսզի մասնագետի առկայության դեպքում ապահովեն: Սա բավականին բարդ խնդիր է, և պետք է լուրջ ուշադրություն դարձնել:

- Շարունակո՞ւմ է գործել գյուղական բնակավայրեր գործուղված ուսուցիչների հավելավճարների տրամադրման կարգը:

- Շրջաններ գործուղված մասնագետներն աշխատանքի ընդունվելու դեպքում նախօրոք դիմում են նախարարություն: Համաձայն գործող կարգի՝ կարող ենք նրանց ուղեգրել, և նրանք կստանան աշխատավարձի 50 տոկոս հավելում, ինչպես նաև՝ բնակարանավարձ:

- Ձեր բարեմաղթանքը՝ նոր ուսումնական տարվա առթիվ:

- Գիտելիքի, գրի ու դպրության օրվա կապակցությամբ շնորհավորում եմ կրթության համակարգի բոլոր աշխատողներին, ուսումնական հաստատությունների սովորողներին և առանձնապես՝ առաջին անգամ դպրոցի շեմին ոտք դնող առաջին դասարանցիներին: Նաև շնորհավորում եմ բոլորին ԼՂՀ հռչակման 22-րդ տարեդարձի առթիվ: Թող խաղաղությունը թևածի մեր երկրում և լինի գիտելիքի համար համառ պայքար՝ ի շահ հզոր և զարգացած պետության կայացման:

- Ի՞նչ խնդիրներ են առաջադրել ուսուցիչները օգոստոսյան խորհրդակցություններում, ի՞նչ հարցեր են հուզում նրանց:

- Բոլորն էլ մտահոգված են ուսման որակի բարձրացման խնդրով: Դա հենց մեր առաջին պահանջն է՝ աշխատել ուժերի լրիվ նվիրումով, կատարել ներկայացված բոլոր պահանջները: Կան դպրոցներ, որոնք ունեն շենքային ու նյութատեխնիկական ապահովության խնդիրներ. այս հարցերն էին նաև շոշափվում խորհրդակցություններում: Կոնկրետ առաջարկություններ են արվել նաև բարեփոխումների ընթացքի վերաբերյալ: Մասնավորապես, խնդիր է դրվում աշխատող ուսուցիչների սոցիալական պայմանների բարելավման, այդ թվում՝ աշխատավարձերի բարձրացման առումով: Բայց հիմնականում բոլորն էլ մտահոգված են, որ աշխատեն ուժերի նվիրումով և ստանան ցանկալի արդյունքներ: Մանրակրկիտ քննարկվել են տարբեր մրցույթներում, առարկայական օլիմպիադաներում ունեցած ցուցանիշները, ի ցույց դրվել այն մանկավարժական կոլեկտիվները, որոնք տվյալ ուղղությամբ պատշաճ աշխատանքներ չեն իրականացնում:

Ընդհանուր առմամբ, բոլորն էլ լավ արդյունքներ են ակնկալում այս բարեփոխումներից: Եվ դա կլինի այն քրտնաջան աշխատանքի արդյունքը, որ տեղերում պետք է ծավալեն մանկավարժական կոլեկտիվները: Պարզ է, որոշ հարցեր կախված են հենց իրենց՝ ուսուցիչների մասնագիտական պատրաստվածության աստիճանից: Միայն լավ պատրաստվածություն և պատասխանատու վերաբերմունք ցուցաբերող ուսուցիչը կարող է պահանջվող արդյունքը տալ: Իսկ մեր ընդհանուր քաղաքականությունն այն է, որ միշտ խրախուսենք նման կարգի ուսուցիչներին: Մենք միաժամանակ խնդիր ենք դնում այն ուսուցիչների առաջ, ովքեր բարեխճորեն չեն կատարում իրենց պարտականությունները:

Ուշադրության կենտրոնում են նաև ներդպրոցական վերահսկողության հարցերը: Տեսչության կողմից ստուգվել են բոլոր տնօրենների, փոխտնօրենների՝ տարվա ընթացքում կատարած դասալսումները. այս ցուցանիշներն են քննարկվում, մատնացույց արվում բոլոր այն ղեկավարները, որոնք պահանջվող դասալսումների չափաքանակը չեն ապահովել: Առանձին դեպքերում քննարկվել են կատարողական կարգապահության հարցեր, և նույնիսկ որոշ դեպքերում խնդիր է դրվել կատարել դպրոցներում ղեկավարների փոփոխություն, ովքեր պատշաճ ձևով չեն կատարում իրենց պարտականությունները:

Խորհրդակցություններում նաև քննարկվեցին ԳԹԿ-ի կողմից ներկայացված միասնական քննությունների արդյունքները, որոնք նույնպես ընդհանուր դպրոցի, աշակերտների գիտելիքների մակարդակի չափանիշ են: Այդ ուղղությամբ անհրաժեշտ եզրահանգումներ են կատարվում հետագա աշխատանքներում նման կարգի թերություններ թույլ չտալու համար:

- Ձեր համոզմամբ, բարեփոխումների արդյունքները տեսանելի՞ են:

- Ըստ ԳԹԿ վերլուծությունների, այս տարվա միասնական քննությունների արդյունքները որակական և միավորային առումով ավելին էին, քան նախորդ տարվանը: Այն, որ միասնական քննությունները լիովին իրենց արդարացրել են, հասարակությունն ու ուլորտի աշխատողները միակարծիք են, սակայն նույնը չենք կարող ասել ավարտական քննությունների մասին: Այս տարի լրիվությամբ, բացի 9-րդ դասարանի հայոց լեզու, գրականություն և մաթեմատիկա առարկաների, մյուսների քննությունները կազմակերպվել են դպրոցներում, և պարզվել է, որ վերջիններիս նկատմամբ այն վերահսկողությունը չի կատարվել, ինչ միասնական քննությունների դեպքում: Հենց միասնական քննություններն են, որ ինչ-որ տեղ կարգավորում են բուհ ընդունվողների մրցույթը: Առաջնակարգ պետք է ընդունվեն նրանք, ովքեր հաղթահարել են միավորային շեմը: Որպես դրական քայլ, ինչը ողջունվում է բոլոր տեղերում, այն է, որ դրական գնահատականի շեմի իջեցում վերջին տարիներին չենք կատարում: Դա էլ որակի առհավատչյա է:

Նույնը՝ ՀՀ և ԼՂՀ բուհեր ընդունված դիմորդների միավորների պարագայում: Բարձր միավորներ են ստացել նրանք, ովքեր և՛ դպրոցում լավ են սովորել, և՛ օլիմպիադաներում առաջնակարգ տեղեր գրավել: Արցախի և ՀՀ պետական բուհերի մի շարք մասնագիտությունների գծով մենք ոչ մի տարի չենք ունեցել երեք առարկաներից 50 և ավելի ու երկու առարկաներից՝ 30 և ավելի միավորներ, որքան այս տարի: Ասել է թե՝ բարձր միավորները պատահականության արդյունք չեն, այլ օրինաչափ երևույթ, կատարված բարեփոխումների արդյունք:

- Ի դեպ, ի՞նչ ընթացք ունեն բարեփոխումները բուհական համակարգում:

- Կրթական եռաստիճան համակարգը, որ ներդրվել է, կարելի է ասել, իրեն արդարացնում է: Սակայն այստեղ որակական հարցերը դեռ իրենց լուծման կարիքն ունեն, հատկապես կրեդիտային համակարգի ուղղությամբ: Դրական քայլ եմ համարում, որ առաջին կուրսի ուսանողներն այս տարի լրիվությամբ կիսամյակային և ընթացիկ քննությունները հանձնեցին համակարգչային եղանակով, որտեղ վերանում են դասախոս-ուսանող անցանկալի հարաբերությունները: Բայց այստեղ ունեցանք որոշ թերություններ՝ այն, որ ոչ բոլոր մասնագիտությունների ու առարկաների գծով է, որ դասախոսները ներկայացնում են լիարժեք թեստեր: Խնդիր է դրվել քանակական առումով դրանք շատացնել, բովանդակային առումով՝ համապատասխանեցնել ծրագրերին: Մտահոգիչ է այն, որ ուսանողները ոչ թե ցածր արդյունքներ են ցուցաբերում, այլ հակառակը՝ բարձր և միջին արդյունքներ. ինչ-որ տեղ տոկոսային հարաբերությամբ դա չի արտացոլում իրական գիտելիքները: Սակայն սա հարթվող գործընթաց է:

Ընդհանրապես, բուհական համակարգում նույնպես լուրջ խնդիրներ կան: Նշեմ, որ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ըստ մասնագիտությունների պետական նոր չափորոշիչներ են մշակվում, հետագայում նաև դրվելու են պետական հավատարմագրման խնդիրներ ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական բուհերում: Այստեղ որակի գնահատման գործընթացն է սկսվում, և բուհի, այսպես ասած, վարկանիշը հենց որոշելու է որակի ուղղությամբ տարվող աշխատանքների ընդհանուր դրվածքը:

Բուհական համակարգում նույնպես, ինչպես հանրակրթության մեջ, նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով պետք է առաջընթաց արձանագրվի. այստեղ պետք է մեծ տեղ տրվի ուսանողների ինքնուրույն աշխատանքին: Ունենք նաև մասնագետների համալրման խնդիր, որը պետք է իրականացվի ասպիրանտական կրթության միջոցով, որտեղ ևս չափանիշները խստացվել են: Մի խոսքով, բարեփոխումները շարունակվելու են:

- Իսկ ի՞նչ կասեիք միջին մասնագիտական կրթության մասին:

- Դեռ էական փոփոխություններ չկան, չհաշված, որ այստեղ ևս պետք է հիմքեր ստեղծվեն կրեդիտային համակարգի անցման, նոր պետական չափորոշիչների ներդրման համար, դրանց հետ էլ կապված՝ առաջադրվեն և՛ մասնագիտությունների հստակեցման, և՛ նոր ծրագրերի խնդիրներ:

Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստեփանակերտի ուսուցիչների օգոստոսյան խորհրդակցությունը՝ մայրաքաղաքի հանրակրթական, նախադպրոցական, արտադպրոցական, միջին մասնագիտական, արհեստագործական հաստատությունների և շահագրգիռ այլ կառույցների ղեկավար աշխատողների մասնակցությամբ, ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանի գլխավորությամբ, ամփոփեց անցած ուստարվա կատարած աշխատանքները և նախանշեց նորի անելիքները: Խորհրդակցությունը վարում էր Ստեփանակերտի քաղաքապետ Սուրեն Գրիգորյանը: Հաշվետվությամբ հանդես եկավ կրթության բաժնի վարիչ Կառլեն Մարգարյանը:

2012-2013 ուսումնական տարում Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնի ենթակայության տակ գործել են 12 հանրակրթական դպրոցներ 289 լրակազմ դասարանով՝ 6722 ա-շակերտի ընդգրկմամբ, երեք նախադպրոցական հիմնարկ 21 խմբով՝ 880 երեխայի ներգրավումով, մեկ մանկական ստեղծագործական կենտրոն 100 խմբով՝ 1061 երեխայի ընդգրկմամբ: Մայրաքաղաքի ուսումնական հաստատություններից հանրակրթություն են իրականացրել նաև ֆիզմաթ դպրոցը, ռազմամարզական վարժարանը և պարարվեստի քոլեջը՝ միասին 31 լրակազմ դասարանով՝ 381 աշակերտի ընդգրկմամբ:

Փոխադրական դասարաններում ուսումնական տարին գերազանց գնահատականներով ավարտել է 562 աշակերտ:

Ավարտական 9-րդ դասարանների 759 աշակերտից գերազանցության նշումով վկայականի հավակնել է 18 աշակերտ, որոնցից միայն երեքին է հաջողվել քննությունների ժամանակ պահպանել գերազանցությունը (հ. 1, 6, ֆ/մ դպրոցներ): Մեդալի հավակնող շրջանավարտ չենք ունեցել:

Մայրաքաղաքի շրջանավարտները գիտելիքների որակական բարձր մակարդակ են ցուցաբերել՝ հավաքելով 18-20 միավոր:

Ներկայացված տվյալները հիմք են տալիս ասելու, որ գիտելիքների բարձր որակական մակարդակ են ցուցաբերել հատկապես ֆիզմաթ դպրոցի շրջանավարտները, որտեղ նույնիսկ հումանիտար առարկաներից ցուցաբերած որակական ցուցանիշները շատ ավելի բարձր են հ. 8, 11 ավագ դպրոցների հումանիտար հոսքերի աշակերտների ունեցած ցուցանիշներից: Ֆիզմաթ դպրոցը բարձր ցուցանիշներ է ունեցել բնագիտական առարկաների ցուցանիշներով թե՛ օլիմպիադաներում և թե՛ քննությունների ժամանակ:

Բանախոսի կարծիքով՝ ուսման որակի վրա բացասական ազդեցություն է ունենում դասերից աշակերտների հաճախակի բացակայությունը. հարկավոր է նոր մոտեցում՝ նման բացասական երևույթները կանխելու համար: Այդ շարքում նշեց նաև դասավանդող ուսուցիչների մի մասի մասնագիտական ու մեթոդական պատրաստվածության ոչ գոհացուցիչ աստիճանը:

Փաստացի տվյալները վկայում են ուսումնադաստիարակչական ուղղությամբ մայրաքաղաքի դպրոցներում կատարած բովանդակալից աշխատանքների մասին: Դրանց շարքում հիշատակվեցին առարկայական օլիմպիադաներում ու առանձին մրցույթներում ինչպես հանրակրթական, այնպես էլ արտադպրոցական հաստատությունների ունեցած ձեռքբերումները: Ահա դրանցից մի քանիսը:

ՀՀ դպրոցականների օլիմպիադայի եզրափակիչ փուլին մասնակցած մայրաքաղաքի դպրոցների 27 աշակերտներից հաջողություններ են ձեռք բերել և մրցանակային 1-ին, 3-րդ տեղեր զբաղեցրել ռուսաց լեզվից՝ Ասյա Առստամյանը, Արման Գրիգորյանը /հ. 3/, օտար լեզվից՝ Տիգրան Վարդանովը /հ. 11, 2-րդ տեղ/, Աննա Արզումանյանը /հ. 1/ և Յուրի Սարգսյանը /ֆիզմաթ/՝ ակտիվ մասնակիցներ, մաթեմատիկայից՝ Սերգեյ և Արմինե Հայրապետյանները /ֆիզմաթ, 3-րդ տեղ/, ֆիզիկայից՝ Սերգեյ Հայրապետյանը՝ 2-րդ տեղ, Դավիթ Հարությունյանը և Սամվել Միրզախանյանը՝ ակտիվ մասնակիցներ /ֆրզմաթ/, հայոց լեզվից՝ Աննա Արզումանյանը /հ. 1, 1-ին տեղ/, ՆԶՊ-ից՝ Անի Հայրիյանը, Մանուշ Սիմոնյանը /հ. 5/ և Լուսինե Շահրամանյանը /հ. 10, 1-ին տեղ/, որոնք Երևանից վերադարձել են դիպլոմներով և գովասանագրերով:

Այս աշակերտների ձեռք բերած հաջողությունների գործում իրենց արժանի ներդրումն ունեն ուսուցիչներ Կարինե Աթաջանյանը և Զոյա Մարտիրոսյանը /հ. 3/, Հասմիկ Սեյրանյանը /հ. 11/, Ռոմելա Դադայանը, Գայանե Հարությունյանը /հ. 1/, Քրիստինե Մնացականյանը, Աշոտ Ապրեսյանը /Ֆ/մ/, Արսեն Հարությունյանը /հ. 5/ և Վարուժան Աղաջանյանը /հ. 10/՝ նշյալ դպրոցներից:

Արտադպրոցական աշխատանքների կազմակերպման լավագույն դարբնոց է «ՄՊԱԿ» ՊՈԱԿ-ը, որը տարեցտարի նորանոր ձեռքբերումներ է ունենում:

Բավական է նշել, որ 2012թ. հոկտեմբերին Երևանում կազմակերպված «Նռան հատիկ» 12-րդ մանկապատանեկան թատերական փառատոնին թատերական ստուդիայի սաները «Գիքոր» ներկայացումով ճանաչվել են որպես լավագույն խումբ, «Ամադեուս-2012» մրցույթ-փառատոնում պարային խումբը գրավել է 1-ին մրցանակային տեղը՝ արժանանալով ոսկե գավաթի, իսկ Ռուսաստանի Դաշնության Սանկտ-Պետերբուրգում կայացած «Ոսկե պալմիրա» միջազգային փառատոնին «Պետերբուրգյան աշուն» մրցույթին պարարվեստի խումբը ճանաչվել է 1-ին կարգի դափնեկիր:

Անցած ուստարին մայրաքաղաքի կրթության համակարգի համար նշանավոր է նրանով, որ շարունակվել է դպրոցաշինության գործընթացը. շահագործման է հանձնվել հ. 3 միջնակարգ դպրոցի վերակառուցված և կահավորված շենքը, ընթացքի մեջ են շինարարական աշխատանքները հ. 1, 6 հիմնական դպրոցներում, ինչպես նաև նախկին հ. 4 մսուր-մանկապարտեզի տարածքում 20 խմբանոց նոր մանկապարտեզի կառուցման աշխատանքները, ընթացիկ վերանորոգման աշխատանքներ են կազմակերպվել հ. 1, 2, 4, 7, 9, 10 և 12 դպրոցներում՝ 10.0 մլն. դրամ ընդհանուր գումարով:

Սակայն համակարգի համար շարունակում են հրատապ մնալ հ. 10 և հ. 9 դպրոցների շենքերի հիմնարար վերանորոգման հարցերը:

Իրենց ելույթներում հ. 7 դպրոցի տնօրեն Անահիտ Պողոսյանը, ՄՊԱԿ աշխատող Իրա Ավանեսյանը, հ. 10 դպրոցի փոխտնօրեն Անահիտ Հակոբյանը, հ. 3 դպրոցի փոխտնօրեն Մարինե Գրիգորյանը, հ. 1 մանկապարտեզի դաստիարակ Ամալյա Ստեփանյանը, հ. 6 դպրոցի ուսուցչուհի Ռիմա Մելքումյանն արտահայտվեցին ինչպես ընդհանուր համակարգին վերաբերող, այնպես էլ իրենց կրթօջախներում առկա խնդիրների մասին, արեցին առաջարկություններ:

Կրթության պատասխանատուներից յուրաքանչյուրը ոլորտի մեկ հիմնախնդիր ներկայացրեց:

ԳԹԿ տնօրեն Յու. Քարամյանն անդրադարձավ սովորողների արտաքին գնահատման, ավարտական և պետական ավարտական և շրջանավարտների միասնական

☞4

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՈՒՍՈՒՑՉԻՆ

Դու, սկսնա՛կ ուսուցիչ, մի լույս առավոտ ոտք ես դրել դպրոցի շեմին: Ողջո՛ւյն քեզ: Եվ հազար լույս նրան, ով առաջինը մտածեց ուսուցման և դաստիարակության մասին: Եթե ես երկրորդ անգամ աշխարհ գայի, դարձյալ կնախընտրեի մանկավարժի ազնիվ մասնագիտությունը:

Առաջին օրը քեզ «ուղեկցել է» արևը: Նա «կամեցել է», որ դու լույսերով ու սրտի ջերմությամբ մտնես կրթական օջախ: Այդ ժամին մեր լեռնաշխարհի բոլոր դպրոցների զանգերը ղողանջել են քո և սաներիդ պատվին: Բարին են մաղթել քո նոր, էությամբ լեցուն կյանքի ճանապարհին: Երկար, շա՜տ երկար ճամփա պիտի անցնես: Այդ ընթացքում դու պիտի մանկավարժի փորձ ու հմտություն ձեռք բերես, իսկ սաներդ՝ առնականան ու «ջուր խմեն» իմաստությանդ զուլալ աղբյուրից: Գործունեությունդ նրանց պիտի հղկի ու դարձնի կատարյալ անձնավորություններ, որպեսզի վաղը նրանք կարողանան դիմակայել կյանքի մարտահրավերներին:

Մեծ ու պատասխանատու է քո գործը, ուսուցի՛չ: Ուզում եմ հավատալ, որ անկեղծորեն կսիրես երեխաներին և կփորձես ինչ-որ բան փոխել նրանց կյանքում: Հիշիր, որ ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների ձևավորումը, դրանց բնույթը զգալի չափով պայմանավորված են ուսուցչի անձով, նրա կազմակերպչական կարողություններով: Աշակերտական կոլեկտիվի ձևավորման և արդյունավետ գործունեության ծավալման համար վճռորոշ նշանակություն ունի ուսուցչի վերաբերմունքն աշակերտի նկատմամբ: Աշխատիր լինել նրա ընկերը, մի շտապիր մեկ օրինակով (լինի դա դրական, թե բացասական) բնութագրել նրան, ուսումնասիրիր նրա անձը, հոգեկան աշխարհը, հակումները, թուլություններն ու արժանիքները: Միայն այդքանից հետո կարող ես գտնել դեպի աշակերտի սիրտը տանող ճանապարհը: Մեծ վարպետություն է պետք երեխայի հոգու խորքը թափանցելու համար, նրա ներաշխարհն ընկալելու համար:

Իմացիր՝ ուսուցչի աշխատանքը ճիշտ գնահատողը աշակերտն է: Նրա գնահատականն անառարկելի է: Ուրեմն, աշխատիր անընդհատ կարդալ, որոնել, ստեղծագործել, որի շնորհիվ էլ կստանաս քո աշակերտների սրտի թելադրանքով նշանակված ամենաիրական գնահատականը: Լավագույն վերաբերմունքն այն աներևույթ սանդուղքն է, որով ուսուցիչն աստիճանաբար բարձրանում է մանկավարժության գագաթը:

Հիմա աշակերտները զարգացած են: Այսօրվա աշակերտը երեկվա աշակերտի նման չէ: 21-րդ դարի անսահմանափակ տեղեկատվությունը հազար թելերով նրանց է հասնում: Հետևաբար, պետք է նրանցից առաջ անցնել, կռահել վաղն ու գալիքը: Ժամանակը հոսում է՝ ոչ ոքի կամքը հաշվի չառնելով: Մեր օրերի ուսուցիչը պարտավոր է քաջատեղյակ լինել նաև կրթության, գիտության, արվեստի ու մշակույթի նորարարություններին:

Գիտատեխնիկական հեղաշրջումների այս դարաշրջանում, բարեկամս, հարկավոր է քաջատեղյակ լինել կյանքին: Այս հարցում, որպես դեղատոմս, կառաջարկեի ինքնակրթությամբ զբաղվել:

Դու շատ լավ գիտես, որ ժամանակակից մանկավարժության և հոգեբանության պահանջներից մեկն էլ միջառարկայական կապ ապահովելն է: Այս հարցում դարձյալ լավագույն միջոցը ինքնակրթությունն է:

Խորհուրդներիցս մեկն էլ այն է, որ ձգտես կատարելագործել խոսքդ: Իմացի՛ր, դա հիմնական զենքն է: Դրանով պիտի կարողանաս հուզել սաներիդ, անշեղ կրակ վառել նրանց մաքուր ու պայծառ հոգիներում: Չէ՞ որ դու նոր ուսուցիչ ես: Պիտի նորովի հանդես գաս նրանց առջև: Բավական չէ, որ երիտասարդ ես, գեղեցիկ: Հավատացնում եմ, երբ սկսես խոսել, դրանք բոլորը կմնան ստվերում: Զարդարուն առավելությունդ կմնա գեղեցիկ խոսքդ:

Գիտե՞ս, թե ինչու մեծությունները կարողանում են լսարաններ գրավել: Որովհետև նրանց խոսքն ունի վիթխարի ուժ: Այդպիսի խոսք ունենալու համար պետք է շատ կարդալ: Չգտի՛ր նմանվել նրանց: Ժողովրդական առածն ասում է. «Լավ է ոտքով սայթաքել, քան լեզվով»: Հրաշալի խորհուրդ է: Մանկավարժական արվեստի «ծանր հրետանին» խոսքն է: Հիշի՛ր, աշակերտներիդ համար քեզանից մեծ մարդ չկա, ուստի ձգտիր սրբությամբ պահպանել այդ պատիվը: Խոսքն ուսուցման ու դաստիարակության առաջին ջութակն է, և այդ ուժով էլ ուսուցիչը եռանդագին դարբնում է իր սաների կրթությունն ու դաստիարակությունը:

Հավատա ինձ, բարեկամս, բարձրագույն կրթությունը դեռևս ամեն ինչ չէ: Լավ դաս վարելը, ուսուցման արդյունավետ մեթոդները ծնվում են աշխատանքի ընթացքում: Մշտապես իր գիտելիքը հարստացնող ուսուցիչը երկար ճանապարհ է անցնում:

Խոր ու անհասկանալի է երեխայի էությունը: Աշխատիր փորձով իմաստնանալ, ճեղքել յուրաքանչյուր երեխայի էության միջուկը, ցույց տալ նրան լավ մարդ դառնալու ճանապարհը:

Անկեղծ ասած, ես չեմ ընդունում «վատ աշակերտ» որակումը, քանզի այդպիսին չկա: Կա թույլ, չարաճճի, շարժուն աշակերտ, բայց նա ուսուցչի «հումքն է», որից պիտի բժիշկ, ուսուցիչ, քանդակագործ, նկարիչ, մի խոսքով՝ հայրենիքի արժանի քաղաքացի կերտի: Իսկ այս դեպքում հումքի որակը չէ ամենակարևորը, այլ քանդակագործ-ուսուցչի վարպետությունը: Աշխատիր, ուրեմն, դառնալ վարպետ-ուսուցիչ:

Սիրելի ուսուցիչ, ուզում եմ մեկ խորհուրդ ևս տալ. աշխատիր ծնողների հավատարիմ դաշնակիցն ու օգնականը դառնալ՝ գիտակցելով, որ ստանձնել ես ոչ դյուրին գործ: Հարկ է ժամանակ հատկացնել նաև ծնողներին. խորհուրդներով, վերաբերմունքով վստահություն ներշնչել, ոգևորել նրանց, հավատ ձևավորել ծնողի մոտ իր երեխայի ուժերի նկատմամբ: Դա երկարատև ու բարդ գործընթաց է, բայց, հավատա, ճշմարիտ է ասված, որ ով չի ձգտում, նա չի հասնում: Սովորելով հաղթահարել դժվարությունները՝ դու քո մեջ դաստիարակում ես վճռականություն, ինչը նաև փոխանցվում է քո աշակերտներին: Վճռականությունը հավատն է քո ուժերի, կարողությունների նկատմամբ, հավատն է նպատակիդ հասնելու համար: Համառությունն ու վճռականությունը պետք է մշտապես արթուն լինեն քո մեջ, դրանք քեզ կօգնեն հաղթահարել ցանկացած դժվարություն, հարթել ինքնուրույն ճանապարհ:

Շատ կարևոր է նաև ուսուցչի տակտը: Հոգեբանները մանկավարժական տակտն այսպես են բնութագրել. «Աշակերտի նկատմամբ բարոյադաստիարակչական հարաբերություններ, մանկավարժական կատարյալ ձևի միասնություն, սանի հանդեպ ուսուցչի խելամիտ սեր, յուրաքանչյուր աշակերտի հանդեպ հարգանք ու մանկավարժորեն հիմնավորված պահանջկոտություն, անկեղծություն և անսահման բարյացակամություն»: Սակայն այդ ամենի ճիշտ իրականացման համար նախ անհրաժեշտ է սեփական խոսքի ու արարքների չափ ունենալ, այլապես ի՜նչ տակտ: Դժբախտաբար, բնությունը մարդուն բացի բանական մտածողությունից, ջերմ ժպտալու ընդունակությունից ու մարդկանց հոգին ջերմացնելու կարողությունից՝ օժտել է նաև չարանալու, անպարկեշտ արտահայտություններ անելու հատկություններով: Դրանք, սակայն, կատարյալ մարդու, առանձնապես ուսուցչի համար չեն: Յուրաքանչյուր քայլից առաջ մտածիր, ինչպես ասում են՝ «յոթ անգամ չափիր, մեկ անգամ կտրիր»:

Չմոռանաս դաստիարակել սրտիդ կուլտուրան ու այդպես վարվել նաև սաներիդ հետ: Սրտի կուլտուրան արարքների, վարքի, 7մարդու սրտի մեջ գրված հազարահատոր աշխատությունն է: Եվ եթե այլ մասնագիտություն ունեցողները հազվադեպ են անդրադառնում այդ «աշխատությանը», ապա դու, գործընկերս, ամեն օր պիտի «թերթես» այն: Երջանիկ է նա, ով այդպես է վարվել և արդեն հասցրել է իր սրտում տեղավորել գեղեցիկ վարքի ու բարի արարքների բոլոր գրերը, դրանք մաս-մաս ու անմնացորդ տվել սաներին:

Իմաստավորիր ժամանակիդ յուրաքանչյուր պահը՝ դասարան մտնելիս ու ողջունելիս, դասանյութը հաղորդելիս, միջանցքում, փողոցում խոսք փոխանակելիս և այլուր: Նույնիսկ այն ժամանակ, երբ աշակերտներդ մոտդ չեն, քո վարմունքի ու շփումների բոլոր ձևերում նրանց համար իսկական մարդ եղիր: Եվ սաներդ ուսերի վրա կպահեն այն սանդուղքները, որոնցով դու ավելի վեր կբարձրանաս, կհասնես հեղինակությանդ կատարին:

Քեզ բարի՛ երթ, երիտասարդ ուսուցի՛չ:

Ռայա ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ
ԼՂՀ կրթության եւ գիտության նախարարության կրթության եւ գիտության վարչության պետ

քննությունների հայտագրմանն ու արդյունքներին:

Հայտագրման գործընթացում թերություններ ընդհանրապես չեն եղել. դա դրական տեղաշարժ է մասնագիտության ընտրության հարցում:

Փորձնական քննությունների մասին նա ասաց, որ դրանք անց են կացվել առանց կարգի խախտման: «Անբավարարների» կտրուկ նվազումը նա պատճառաբանեց 2 հանգամանքով. առաջին՝ գնահատականների նվազագույն դրական շեմը 13-ից իջեցվել է մինչև 9: Երկրորդ՝ մտավախությունը, թե շրջանավարտներից ոմանք կզրկվեն վկայականից: Դրա համար էլ մեղմ վերաբերմունք է եղել պաշտոնատար անձանց կողմից: ԳԹԿ տնօրենն առանձնակի կանգ առավ «գերազանցների» վրա, որոնց մասով էլ հիմնականում եղել են բողոքները: Մաթեմատիկայի քննության ժամանակ եզակի են եղել դեպքերը, երբ ընդարձակ պատասխաններ պահանջող հարցերի պահանջվող տեղում որևէ գրառում արված լինի: «Հարգելի ուսուցիչներ, նշանակեք ճիշտ գնահատականներ ոչ թե համեմատության կարգով, այլ պետական չափորոշիչներին համապատասխան»,- հերթական անգամ այս կոչն արեց ԳԹԿ տնօրենը:

Կրթության պետական տեսչության պետ Սոս Արզումանյանը ներկայացրեց իր նկատառումները տեսչության կողմից 2012-2013 ուստարում կատարված աշխատանքների մասին: Ինչպես հայտնի է, «Լուսարարի» հ. 22-24-ում ընդարձակ հաշվետվություն կա այդ մասին՝ երեք մասից բաղկացած. առաջինում տեսչապետի ընդհանրացումներն են, 2-րդ մասում՝ տեսչության կողմից հանրակրթական բոլոր հաստատություններում ստուգված ղեկավար աշխատողների դասալսումների ամփոփացուցակը, 3-րդ մասում՝ պետական տեսուչների՝ առարկայական մասնագետների վերլուծությունը: Այստեղ տեսուչները զետեղել են նաև աղյուսակներ, որոնցում տոկոսային հարաբերությամբ տրված են ստուգված դպրոցներում առաջադիմությունը և որակը, ինչը հնարավորություն է տալիս համեմատել ցուցանիշները: Ս. Արզումանյանն ասաց, որ եթե նախկինում ղեկավար աշխատողները բողոքում էին, որ դասալսումների նորման բարձր է, հիմա արդեն ոչ միայն այդ բողոքները վերացել են, այլև ձգտում են որակական հատկանիշները բարձրացնել: Բայց այս ուղղությամբ դեռ կան խնդիրներ. որոշ տնօրեններ և փոխտնօրեններ ձգտում են քանակը բավարարել՝ որակին ուշադրություն չդարձնելով: Ս. Արզումանյանը դա անընդունելի համարեց: Տեսչապետի հաջորդ պահանջը՝ դասալսումներն ինքնանպատակ չլինեն, վերլուծվեն, քննարկվեն ուսուցիչների հետ: Մյուսը՝ դասալսումը կատարել նպատակային: Տեսչապետի գնահատմամբ՝ այս պահանջը գրեթե ոչ մեկի կողմից չի կատարվում: Տեսչությունը պատասխանատու է տեղերում հետևել ԿԳ քաղաքականության ճիշտ իրականացմանը, հնարավորինս հսկել, վերահսկել, ստուգել՝ իհարկե, ցույց տալով համապատասխան մասնագիտական օգնություն:

Ուշադրության կենտրոնում են եղել առանձնապես ավագ դպրոցները: Բողոքներ են հնչել դասավանդման ոչ պատշաճ որակի, հաճախումների, մեթոդական աշխատանքի դրվածքի մասին: Ստուգվել են, քայլեր ձեռնարկվել, և ակնկալվում է, որ ավագ դպրոցները հաջորդ ուսումնականում ավելի բարձր ցուցանիշներ կունենան:

Կատարվածն արտաքին ստուգումներ են, դպրոցում հաճախակի պիտի դառնան ներքին ստուգումները: Ս. Արզումանյանի խոսքով, դրանք ամենուրեք կաղում են: Այդ առնչությամբ պատրաստ են լսել ցանկացած առաջարկություն: Խորհրդակցություններում մի քանիսը հնչեցին, բայց պետք չէ սպասել մինչև նման կարգի հավաքները: Ցանկալի է, որ դրանք արվեն ճիշտ պահին, որպեսզի սխալները ժամանակին շտկվեն:

Փոխնախարար Միքայել Համբարձումյանը անդրադարձավ կրթության ցանկալի որակին հասնելու միջոցների շարքում առաջնային համարվող համակարգչային տեխնոլոգիաներին: ՏՀՏ-ն զարգանում է սրընթաց ոչ միայն տեխնիկական իմաստով, այլև կիրարկման ոլորտների ու կիրառման փորձայնության ընդլայնմամբ: ԼՂՀ կառավարության կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը ճանաչվել է տնտեսության զարգացման գերակա ճյուղերից մեկը, որի շրջանակներում ԿԳ նախարարությունն իրականացնում է ծրագրեր: Առաջինը վերաբերում է դպրոցների տեխնիկական պարկի համալրմանն ու թարմացմանը. ՀՀ և ԼՂՀ ԿԳՆ համաձայնագրի շրջանակներում դպրոցները համակարգիչներով ապահովումը, ՆՈՒՌ ծրագիրը և այլն:

Մ. Համբարձումյանի տեսակետով՝ խնդիրն այդ տեխնիկայի օգտագործման նկատմամբ վերահսկողությունն ուժեղացնելն է: Տեղեկացրեց, որ ունենք ծրագիր. «Ռոբոտաշինությունը սկսվում է դպրոցից». ութ ուսուցիչներ օգոստոսի 1-29-ը վերապատրաստվել են Երևանի ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկության միության մասնագետների կողմից: Այդ ուսուցիչներին պետք է ապահովել խմբակային ժամերով՝ ռոբոտատեխնիկային երեխաներին ծանոթացնելու նպատակով: Բացի այդ, կատարվում են փորձարարական աշխատանքներ: Անցյալ տարի Ասկերանի շրջանի Այգեստանի դպրոցում 5-6-րդ դասարանների շրջանում «Ինստիգեյթ այփի» տեխնոլոգիաների ոլորտում աշխատող ձեռնարկության մասնագետների հետ միասին իրականացվեց «Սկրաչ» ծրագրի ուսուցումը, և այսօր դպրոցականներն իրենք են ստեղծում ու մոդելավորում խաղեր:

Ամեն տարի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում անցկացվում է «Դիջիթեք» ստուգատեսը, որտեղ արդեն երկրորդ տարին է՝ ունենում ենք մեր մասնակցությունը: Դրանցում ամենաակտիվը Ստեփանակերտի դպրոցականներն են: Ինչ վերաբերում է համացանցին, Ստեփանակերտում բոլորը բավարարված են, բայց նպատակային օգտվողները քիչ են: Եթե մի քանի տարի առաջ հայալեզու կայքեր, ռեսուրսներ չունեինք, հիմա դրանց քանակը մեծացել է: Եվ ուսուցիչները որոշակի աշխատանքներ ունեն անելու՝ երեխաներին Одноклассник -ֆեյսբուքյան վտանգավոր ծուղակներից հեռացնելու և նրանց ուղղորդելու դեպի գիտակրթական կայքեր:

Մ. Համբարձումյանն անդրադարձավ նաև տարբեր առարկաներից առցանց անցկացվող օլիմպիադաներին: Անցյալ տարի հայտարարություն էր տվել հայ-սլավոնական համալսարանի առցանց օլիմպիադային մասնակցելու համար, բայց, ցավոք, մասնակցություն չունեցանք:

Էլեկտրոնային պաշարները, շատերի կարծիքով, դուրս են մղվում տպագիր գիրքը, բայց դա այնքան էլ այդպես չէ, այն գտնվում է իր բարձրության վրա: Այս առումով էլ նախարարությունը իր պարտավորությունները կատարել է. 67 անուն դասագիրք, ուսուցչական ձեռնարկներ, աշակերտական տետրեր պահեստավորված են, մասամբ առաքված շրջանները, և գործընթացը շարունակվում է: -------

Ստացվել են ՀՀ ԿԳՆ տեղեկագրերը, որտեղ զետեղված են առարկայական ծրագրերին վերաբերող բոլոր մեթոդական ցուցումները: Բացի այդ, դրանք տեղադրված են նաև Ani.edu կայքում: Հ. 4 տեղեկագրում զետեղված են նաև գնահատման մեթոդներին վերաբերող մեթոդական ցուցումները: Այդ հարցում փոփոխություններ չկան:

ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանի ամփոփիչ ելույթը ծրագրային դրույթների պարունակմամբ՝ հանձնարարականներ էին ոչ միայն մայրաքաղաքի ուսուցիչներին ուղղված: Նա արծարծեց հանրակրթության ոլորտի գլխավոր խնդիր հանդիսացող ուսման որակի բարձրացման հարցը՝ ասելով, որ քննարկումներից մանկավարժները պետք է ճիշտ եզրակացություն անեն և բոլոր այն առաջադրանքները, որ դրվում են նրանց առաջ, կատարեն: Դա վերաբերում է և՛ դասավանդման նորագույն մեթոդներին, և՛ տեխնիկական միջոցների օգտագործմանը: Ունեցած տեխնիկական պաշարը, որը համեմատաբար քիչ չէ, չմատնեն անգործության, այլ օգտագործեն ինչպես պետքն է: Դրա համար բոլոր պայմաններն են ստեղծված. ունենք համակարգչային կաբինետներ, համապատասխան աշխատողներ, մնում է աշխատանքային ռեժիմ սահմանել այդ կաբինետներում աշխատելու համար և դասերի ընթացքում ու հետո նշել, թե որ առարկաներից, որ դասարաններում: Ուսումնական պլանով որոշ առարկաների գծով պարտադիր է դասերի անցկացումը համակարգչային կաբինետներում՝ չհաշված, որ շատերն ունեն նաև անհատական համակարգիչներ՝ տրամադրված ՆՈՒՌ ծրագրով:

Նախարարն անդրադարձավ նաև դասագրքերի հարցին, ինչի մասին շատ է խոսվում: Տեղեկացրեց, որ կան և այլընտրանքային դասագրքեր, որոնք տեղադրված են էլեկտրոնային պաշարում: Ցանկացած դասագրքից մասնագետները կարող են օգտվել: Կա բազմաթիվ մեթոդական գրականություն: Հնարավոր չէ բոլորը ձեռք բերել և իմաստ էլ չունի, համացանցի առկայության պայմաններում մեթոդական գրականության խնդիր չպետք է լինի: «Ինչ հնարավոր է դրսից բերել, մենք բերում ենք մնում է, որ տեղում դուք կարողանաք դա իրացնել»,- ասաց նա:

Ս. Ասրյանը շոշափեց նաև դպրոցաշենքերի հիմնանորոգման հարցը, մանավանդ որ, ինչպես մայրաքաղաքի, այնպես էլ շրջանների խորհրդակցություններում բարձրացվեց այդ խնդիրը: Կոնկրետ առաջարկություններ հնչեցին 10-րդ դպրոցի հիմանորոգման, կից կառույցների կառուցման մասին: Այդ առնչությամբ նախարարն ասաց հետևյալը. «Այս ամենի մասին մեր իշխանությունները տեղյակ են: Հնարավոր չէ կարճ ժամկետում բոլոր խնդիրները լուծել: Հետադարձ հայացք ձգելով՝ կտեսնենք, թե այս տարիներին քանի նոր դպրոց է կառուցվել, քանի մանկապարտեզ, քանի արտադպրոցական ուսումնական հաստատություններ վերակառուցվել, և ամենայա վերանորոգումներն են իրականացվում: Այնուամենայնիվ, անելիքները դեռ շատ են, հնարավորություններն են սուղ: Սպասեք, յուրաքանչյուրիդ հերթը կգա»:

Նախարարի հարցադրումները կտրուկ էին ուսման որակի մասին խոսելիս, հատկապես երբ դա վերաբերում էր հոսքային դպրոցներին. «Դուք տեսաք, թե ֆիզմաթ դպրոցն ինչ ցուցանիշներ ունի ոչ միայն բնագիտական, այլև մյուս առարկաներից: Նշանակում է այդ մանկավարժական կոլեկտիվը իր խնդիրը լավ հասկացել և այդ ուղղությամբ նպատակասլաց աշխատանքներ է տանում, ինչը չես ասի մյուս երկու ավագ դպրոցների մասին, թեպետ բացարձակապես տարբերություն չկա ժամաքանակի առումով, նույնն են այդ դպրոցների բնագիտական առարկաներին հատկացված ժամերը: Մնում է, որ այս հոսքերի ուսուցիչները ևս նպատակադրվեն աշխատել արդյունավետ, տալ օլիմպիադայի մասնակից տեխնիկական առարկաներից: Տարիներ շարունակ մաթեմատիկա և ֆիզիկա առարկաներից հաղթողներ լինում են միայն ֆիզմաթ դպրոցից»:

Նախարարը չվարանեց նաև մի արատավոր երևույթի մասին արտահայտվել, որին բախվել են անցած ուսումնական տարում: «12-րդ դասարանների աշակերտներն իրենք էին որոշում՝ դասի գալ, թե չգալ, այդ առարկայի դասին նստել, թե չնստել, և դպրոցների ղեկավարներն էլ հաշտվողական քաղաքականություն էին վարում: Եթե չլիներ նախարարության միջամտությունը, հարցը գուցե ավելի խորանար: Եվ հենց դա էլ անդրադառնում է նրանց արդյունքներին: Ես չեմ ուզում այդ հարցին կտրուկ անդրադառնալ, ուղղակի որպես խնդիր բարձրացնելով՝ դիմում եմ այդ դպրոցների ուսուցիչներին ու ղեկավարներին՝ իմացեք, որ գտնվելու եք նախարարության անմիջական վերահսկողության տակ: Տեսչությունը առաջին իսկ հնարավորության դեպքում լինելու է դպրոցներում: Եթե մի գործ սկսել ենք, պետք է կատարենք արդյունավետորեն: Եթե չի կատարվում, ուրեմն և՛ մեր ընտրությունն է սխալ, և՛ պատասխանատվության աստիճանը չի համապատասխանում, ու չկատարած աշխատանքի համար մեղավորները պետք է պատժվեն: Այստեղից պետք է լուրջ հետևություն անել. խնդիրը կա, հասկացեք և վերջ տվեք այդ երևույթին: Եթե չենք ապահովում համապատասխան որակ, առաջադիմություն, պատճառն ուրիշ տեղ չփնտրեք: Աշակերտների հետ աշխատեք ձեր սահմանված ժամկետներում, ռեժիմով, ձեզ տրված մեթոդական ռեսուրսներով: Սա է այսօրվա խնդիրը: Ես մի պարզ ճշմարտություն բազմիցս եմ կրկնում. մեր ոլորտը համընդհանուր ոլորտ է, որի գործունեությանը տեղյակ են բոլորը, հասարակության բոլոր անդամները: յուրաքանչյուր ընտանիքից ձեզ մոտ ներկայացուցիչ կա, որոնք ձեզանով կարծիք են ստեղծում ընդհանուր աշխատանքի մասին»:

Գնահատելով հանդերձ մասնակի ձեռքբերումները՝ Ս. Ասրյանը կոչ արեց ինքնահանգստացում չապրել, մեղմ ասած, չքաքնվել հաջողությունների հետևում. «Ունենք նաև բավականին առաջընթաց, դրական արդյունքներ, այդ են վկայում բազմաթիվ միջոցառումները, այդ թվում՝ առարկայական օլիմպիադաները և այլն: Բայց սա բոլորի համար բնութագրական չէ: Իհարկե, 21000 աշակերտից միշտ էլ կարելի է 100 լավը ընտրել և 5000 ուսուցչից՝ 100 լավագույնը: Բայց խնդիրն այն է, որ այդ ցուցանիշներն ավելի բարձր լինեն»:

Նախարարի մյուս պահանջն է՝ կազմակերպվող միջոցառումներին չցուցաբերել ձևական մոտեցում: «Վերապատրաստման, ատեստավորման գործընթաց ենք իրականացնում, որպեսզի ուսուցիչը նոր նյութ, նոր լիցք ստանա, բայց եթե ինքը չի ձգտում, արդեն շատ վատ երևույթ է: Եվ այս հարթությունում էլ բոլոր ղեկավարներից պահանջում եմ՝ յուրաքանչյուրդ ձեր ներդպրոցական վերահսկողությունը պլանավորեք այնպես, որ տարվա ընթացքում բոլոր առարկաները լինեն ձեր վերահսկողության դաշտում, որ կարողանաք ճիշտ եզրահանգումներ անել: Ոչ ոք ձեզ չի ստիպում վատ աշխատող ուսուցչին անընդհատ պահել, բավարարել: Ներկա օրենսդրությունը դա թույլատրում է»: Այս համատեքստում նախարարն անդրադարձավ կարգապահական հարցերին, ինչպես աշակերտների վարքին, նրանց դաստիարակությանը, ծնողների հետ տարվող աշխատանքին, այնպես էլ մանկավարժների կատարողական կարգապահությանը:

«Որպես կառավարման լիազոր մարմնի ղեկավար՝ պահանջում եմ, որ կատարողական կարգապահությունը լինի պատշաճ մակարդակի վրա՝ տնօրենից մինչև վերջին աշակերտ, վերջին աշխատող: Ամեն մարդ թող իր պարտականությունը կատարի, ձևական հաստիքներ չպահել. եթե պահակ է, նա պիտի պահակություն անի, օպերատոր է՝ օպերատորություն, ուսուցիչ է՝ իր աշխատանքը կատարի պատշաճ ձևով»:

Ս. Ասրյանը պատասխանեց նաև ելույթներում բարձրացված հարցերին: Մասնավորապես այն հարցին, որ դպրոցից դպրոց երեխաների հոսք կա, պատասխանեց: «Կա ընտրություն, յուրաքանչյուրն ուզում է կայուն գիտելիք ստանալ: Չնայած կասեի, որ միևնույն մակարդակի են մեր դպրոցները: Չենք կարող ասել՝ այս դպրոցը, թույլ է, մյուսը՝ ուժեղ: Եվ յուրաքանչյուր դպրոցում էլ ունենք կարող մանկավարժական ուժ, որը ցանկության դեպքում ի վիճակի է հասնել լավագույն արդյունքների: Բայց մեր ծնողների մոտ թվացյալ կարծիք կա, և սկսում են երեխաներին դպրոցից դպրոց տեղափոխել: Ոչինչ, դա ընդունելի է»:

Դաստիարակների աշխատավարձի բարձրացման մասին հարցին ի պատասխան ասաց, որ եկող տարվանից նախատեսվում է բոլոր ոլորտների աշխատավարձերի բարձրացում, նաև ուսուցիչների վարձատրության մոտեցումն են փոխվել: Հունվարի 1-ից կկարգավորվեն հարցերը, դաստիարակների աշխատավարձը կլինի միասնական:

Չշրջանցվեց դպրոցական համազգեստի հարցը: Ներկա պայմաններում լուծման հետևյալ տարբերակն է, որին ինքնակամ գնացել են որոշ կրթօջախներ. դպրոցը, անգամ դասարանը աշակերտների, ծնողների հետ կարող են որոշել ինչ համազգեստ կրել:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԴՊՐՈՑՈՒՄ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՐԿԱ ՉԿԱ

Նոր ուստարվա նախօրեին՝ օգոստոսի 27-ին, Բերձորի Վ. Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցի դահլիճում Քաշաթաղի շրջանի հանրակրթական դպրոցների տնօրենների, փոխտնօրենների, ուսուցիչների մասնակցությամբ կայացավ օգոստոսյան ավանդական խորհրդակցությունը, որին ներկա էին ԼՂՀ ԿԳ նախարար Սլավա Ասրյանը, փոխնախարար Միքայել Համբարձումյանը, պետական տեսչության պետ Սոս Արզումանյանը, ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանը:

Շրջվարչակազմի ղեկավար Սուրեն Խաչատրյանը, բացելով խորհրդակցությունը, ողջունեց ներկաներին, շնորհավորեց նոր ուստարվա և ԼՂՀ հռչակման տոների առթիվ: Շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանը ներկայացրեց հաշվետվություն անցած ուստարում կատարածի և նոր ուսումնականում կատարելիքի վերաբերյալ: Համաձայն հաշվետվության՝ 2012-2013 ուստարում Քաշաթաղի շրջանում գործել են 51 հանրակրթական դպրոցներ, որոնցից 43-ը միջնակարգ՝ 2 մասնաճյուղով և 8 հիմնական: Ձևավորվել է 355 դասարան-կոմպլեկտ՝ 1716 աշակերտի ընդգրկմամբ (728 ուսուցիչ, ընդհանուր՝ 1098 աշխատող): Գործել են նախադպրոցական 2 հաստատություն՝ Բերձորի պետական և Քարեգահի բարեգործական հիմունքներով մանկապարտեզները:

Շրջվարչակազմի ղեկավարի աջակցությամբ կազմավորվել են Բազմատուսի և Կերենի միջնակարգ դպրոցները: Սեպտեմբերի 1-ին բոլոր դպրոցներում անցկացվել են միջոցառումներ՝ նվիրված Գիտելիքի, գրի և դպրության օրվան, ինչպես նաև արիության դասեր՝ ԼՂՀ հռչակման տարեդարձի առթիվ: Ուստարվա ընթացքում ԿԳ նախարարությունից ստացվել և դպրոցներին են բաշխվել դասագրքեր, մեթոդական, մանկավարժական ձեռնարկներ, դիդակտիկ պարագաներ: Այգեհովիտի միջնակարգ դպրոցին տրամադրվել են լաբորատոր սարքավորումներ, իսկ որոշ դպրոցներ համալրվել են անհրաժեշտ գույքով: Բերձորի Վ. Զատիկյանի անվան հ. 2 միջնակարգում նախարարության աջակցությամբ 2013թ. ստեղծվել է նոր համակարգչային դասարան՝ ինտերնետ կապով:

Ուսուցչի օրվա առթիվ Քաշաթաղի շրջանի կրթության ոլորտում նշանակալի ավանդի համար Մշենիի միջնակարգ դպրոցի տնօրեն Աշոտ Ներսիսյանը ԼՂՀ Նախագահի կողմից պարգևատրվել է «Երախտագիտություն» մեդալով, մի շարք մանկավարժներ՝ ԼՂՀ վարչապետի հուշամեդալով, շրջվարչակազմի ղեկավարի պատվոգրով: Ուստարվա ընթացքում շրջանի հանրակրթական դպրոցների աշակերտներն ակտիվ մասնակցություն են ունեցել ԼՂՀ ԿԳ նախարարության կազմակերպած ռազմամարզական, արտադպրոցական միջոցառումներին, մրցույթներին և առարկայական օլիմպիադաներին: ՀՀ և ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլին մասնակցել է շրջանի 26 աշակերտ:

Մտահոգիչ է այն փաստը, որ համապատասխան մասնագետներով ապահովված դպրոցները, որոնք յուրաքանչյուր դասարանում ունեն 3-5 աշակերտ, օլիմպիադայի մասնակիցներ չեն ներկայացնում նույնիսկ շրջանային փուլին: 2012-2013 ուստարվա ընթացքում ԼՂՀ ԿԳ նախարարության և ԳԹԿ-ի կողմից անցկացվել են արտաքին ստուգումներ մի շարք առարկաներից, որոնց արդյունքները ևս քննարկվել են դպրոցների տնօրենների խորհրդակցություններում:

Ուստարվա ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակությանը: 2012թ. հոկտեմբերին ՀՀ և ԼՂՀ ԿԳՆ և ՊՆ կողմից Բերձորի հ. 1 միջնակարգ դպրոցին տրամադրվել է ռազմական վարժասարք, որը կարևոր նշանակություն ունի հատկապես շրջանի հյուսիսային թևի դպրոցների 8-12-րդ դասարանցիների կրակային պատրաստվածության որակի բարձրացման համար: Չնայած կատարված աշխատանքներին, դեռևս շատ անելիքներ կան դպրոցներում ռազմական պատրաստվածությունը պատշաճ մակարդակի բարձրացնելու ուղղությամբ: Անհրաժեշտ է դպրոցները հնարավորինս ապահովել ուսումնառազմական բազայով և համապատասխան պայմաններ ստեղծել ՆԶՊ առարկայի դասավանդման համար: Միայն Բերձորի երկու դպրոցներն են համալրված ուսումնական զենքով՝ ինքնաձիգով: Որոշ դպրոցներ ունեն օդամղիչ հրացաններ: Հարավային թևի դպրոցների աշակերտների կրակային պարապմունքներն անցկացվում են մոտակա զորամասերի օժանդակությամբ:

Անհանգստացնող է նաև զինղեկների ոչ բավարար մասնագիտական մակարդակը: Նոր ուստարում հետևողական աշխատանքներ են նախատեսվում նշված խնդիրները լուծելու նպատակով: Կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ, բաց դասեր, դասախոսություններ՝ `նվիրված ՀՀ և ԼՂՀ ազգային հերոսներին, կայացել են հանդիպումներ ազատամարտիկների հետ, այցելություններ մի շարք զորամասեր: 2012թ. սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսներին ԼՂՀ ԿԳՆ կրթության պետական տեսչության կողմից համակողմանի ստուգումներ են անցկացվել Քարեգահի, Հոչանցի, Մշենիի, Արվականի և Սոնասարի հանրակրթական դպրոցներում: Մշենիի, Հոչանցի, Սոնասարի միջնակարգ դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանքները գնահատվել են բավարար, իսկ մնացած երկուսինը՝ անբավարար: Կրթության բաժնի առաջատար մասնագետների (տեսուչների) կողմից մեթոդական օգնության և ստուգումների նպատակով այցելություններ են կատարվել 25-ից ավելի դպրոցներ: 2013թ. հունիսին ԼՂՀ ԿԳՆ պետական տեսչության բաժնի պետ Սոս Արզումանյանի կողմից ստուգվել են դպրոցների տնօրենների և փոխտնօրենների կողմից կատարված դասալսումների մատյանները:

Ճիշտ է, նախորդ ուստարվա համեմատությամբ զգալի դրական փոփոխություններ են գրանցվել, սակայն Արատաշավիի, Աղավնատան և Վուրգավանի դպրոցների փոխտնօրենների կատարած դասալսումները գնահատվել են անբավարար: 2012-2013 ուստարում 95 աշակերտ ավարտել է դպրոցը, որոնցից ՀՀ և ԼՂՀ բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ են ընդունվել 60-ից ավելի շրջանավարտներ: Ուստարվա ընթացքում Քաշաթաղի շրջվարչակազմի օգնությամբ կրթության բաժինն աշխատանքներ է տարել շրջանի հանրակրթական դպրոցները մանկավարժական կադրերով ապահովելու ուղղությամբ, սակայն դպրոցների զգալի մասը դեռևս ապահովված չէ մասնագետներով. պատճառը հիմնականում բնակարանային խնդիրն է:

Շրջանի շատ դպրոցներ չունեն բավարար շենքային պայմաններ: Հիմնանորոգման են ենթակա Դրախտաձորի, Բերձորի հ. 1, Տանձուտի, Վուրգավանի, Տիգրանավանի, Վանի, Ղազարապատի դպրոցների շենքերը, իսկ Հայկազյանում, որտեղ սովորում են 100-ից ավելի աշակերտներ, անհրաժեշտ է նորը կառուցել: Արտաշավիի և Միջնավանի դպրոցների շենքերի հիմնանորոգման աշխատանքները դեռ չեն ավարտվել: Ուրախալի է, որ Փակահանում կառավարության աջակցությամբ սկսվել են նախկին դպրոցի շենքի հիմնանորոգման աշխատանքները: «Քաշաթաղ» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ թիթեղապատվել են Վուրգավանի, իսկ 2013թ. համար նախատեսված դպրոցների մասնակի վերանորոգման գումարով՝ Քաշունիքի և Վակունիսի դպրոցների տանիքները:

Ավարտելով ելույթը՝ Վ. Մովսիսյանը շնորհակալություն հայտնեց շրջանի բոլոր այն մանկավարժներին, ովքեր անտեսելով կենցաղային ոչ բարվոք պայմանները, ջանք ու եռանդ չեն խնայում մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում:

Ելույթ ունեցավ նաև Միջնավանի դպրոցի տնօրեն Մարգարիտա Սարգսյանը: Նա կարևորեց դպրոցի դերը, ներկայացրեց իր ղեկավարած կրթօջախը, որը բացվել է 1996 թվականին և կոչվում է հայ ժողովրդի բարեկամ Գալինա Ստարովոյտովայի անունով: Դպրոցն անցած տարիների ընթացքում տվել է շնորհալի շրջանավարտներ, ովքեր ընդունվել են տարբեր ուսումնական հաստատություններ, վերադարձել հայրենի քաղաք: 21 ուսուցիչ և 50-ից ավելի աշակերտ ունեցող դպրոցի շենքը նորոգման ընթացքում է, որն էլ խանգարում է կրթական աշխատանքներին:

ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանն անդրադարձավ միասնական և ավարտական քննությունների արդյունքներին, ինչպես նաև իրենց կենտրոնի կողմից անցկացված փորձնական քննություններին: Նա դժգոհեց որոշ դպրոցներում փորձնական քննությունների արդյունքներից, որոնք համեմատաբար բարձր գնահատականներ են եղել, և հորդորեց նման դեպքերում ճիշտ գնահատել աշակերտների գիտելիքները:

Կրթության պետական տեսչության կողմից անցկացված ստուգումներին անդրադարձավ տեսչության պետ Սոս Արզումանյանը: Խոսելով տնօրենների և ուսմասվարների կողմից դասալսումների մասին՝ նա ասաց, որ 3 դպրոցում ուսմասվարների աշխատանքը գնահատվել է անբավարար, մնացած դպրոցներում համեմատաբար լավ են արդյունքները:

ԿԳ փոխնախարար Միքայել Համբարձումյանը կարևորեց համակարգիչների դերը դպրոցներում:

Խորհրդակցությունն ամփոփեց ԼՂՀ ԿԳ նախարար Սլավա Ասրյանը: «Կրթության որակի բարձրացումը պետք է լինի մեր աշխատանքի առանցքային խնդիրը»,- ասաց նա՝ հավելելով, որ չնայած տարեցտարի զգացվում է որոշակի առաջընթաց, բայց անելիքներ դեռ շատ կան: Նախարարը նշեց, որ կառավարությունը հատուկ քաղաքականություն է վարում Քաշաթաղի շրջանի նկատմամբ, մասնավորապես՝ կրթության բնագավառում: «Կրթության մակարդակով է պայմանավորված մնացած բնագավառների զարգացումը, ուստի ամեն ինչ կախված է ձեր աշխատանքից»,- ներկաներին դիմեց Ս. Ասրյանը: Նա կոչ արեց դպրոցների տնօրեններին ու փոխտնօրեններին՝ ավելի պահանջկոտ լինել: Անդրադառնալով ուսուցիչների վերապատրաստման անհրաժեշտությանը՝ նախարարը տեղեկացրեց, որ 2018 թվականից դպրոցներում միջին մասնագիտական կրթությամբ ուսուցիչներ չեն ընդունելու: Վերջում նա շնորհակալություն հայտնեց մանկավարժներին՝ նրանց աշխատանքի համար և շնորհավորեց Գիտելիքի օրվա ու ԼՂՀ հռչակման տոների կապակցությամբ:

Ջոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՎԵԼ ԵՆ ԲԱՎԱՐԱՐ

Ամենամյա օգոստոսյան խորհրդակցությունն ամենալավ հնարավորությունն է՝ խոսելու նախորդ ուսումնական տարվա ձեռքբերումների ու բացթողումների մասին, քննարկելու հետագա անելիքները: Հերթական օգոստոսյան խորհրդակցությանը ներկա էին ԼՂՀ ԿԳ նախարար Ս. Ասրյանը, փոխնախարար Մ. Համբարձումյանը, ԳԹԿ տնօրեն Յու. Քարամյանը, Շահումյանի շրջվարչակազմի ղեկավար Վ. Դանիելյանը, շրջանի կրթության ոլորտի պատասխանատուներ:

Շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Խ. Վարդանյանը ներկայացրեց հետևյալ տվյալները. 2012-2013 ուստարում շրջանում գործել են 16 հանրակրթական դպրոցներ, որոնցից 11-ը՝ միջնակարգ, 5-ը՝ հիմնական: Նշված դպրոցներում ընդգրկված է եղել 647 աշակերտ՝ նախորդ տարվա 641-ի փոխարեն, որից 129-ը՝ Քարվաճառի միջնակարգ դպրոցում, իսկ մնացած 518-ը՝ գյուղական համայնքների դպրոցներում: Առաջին դասարան է հաճախել 73 աշակերտ: Հաշվետու ժամանակահատվածում հնարավորինս հարստացել է ուսումնանյութական բազան, դպրոցները համալրվել են դպրոցական գույքով, համակարգիչներով ու տպիչ սարքերով: Բոլոր դպրոցներում կազմակերպվել և անցկացվել են տարաբնույթ միջոցառումներ՝ նվիրված տոնական, հոբելյանական և հիշատակի օրերին: Երկու լավագույն մանկավարժներ՝ Քարվաճառի միջնակարգ դպրոցի տնօրեն Էմմա Ֆահրադյանը և Ականաբերդի միջնակարգ դպրոցի դասավար Լյուդմիլա Քյոխյանը, պարգևատրվել են ԼՂՀ վարչապետի հուշամեդալով:

Առարկայական օլիմպիադաների շրջանային փուլին մասնակցել են շրջանի 11 դպրոցների 65 աշակերտներ, նրանցից 17-ը իրավունք են ստացել մասնակցելու հանրակրթական փուլին: Նշված 17 աշակերտներից մեկը՝ Ականաբերդի միջնակարգ դպրոցի աշակերտ Դավիթ Մակարյանը, ՆԶՊ առարկայից գրավել է 2-րդ մրցանակային տեղը, իսկ Եղեգնուտի միջնակարգ դպրոցի աշակերտուհի Անի Հովհաննիսյանը պատմություն առարկայից արժանացել է գովասանագրի:

Ուսումնական գործընթացի արդյունավետության նպատակով ԿԳ նախարարության կողմից կազմակերպվել են ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, սեմինար-պարապմունքներ, որոնց մասնակցել են նաև շրջանի 34 մանկավարժներ՝ տարբեր առարկաների գծով: Նրանցից 33-ը ատեստավորվել են:

Նախարարության կրթության պետական տեսչության և շրջանի կրթության բաժնի կողմից համակողմանի ստուգման են ենթարկվել շրջանի մի շարք դպրոցներ: Ստուգումների արդյունքում ուսումնադաստիարակչական աշխատանքները գնահատվել են բավարար:

Անդրադառնալով 2012-2013 ուստարում աշակերտների ցուցաբերած առաջադիմությանը, զեկուցողը նշեց, որ շրջանում կան 58 գերազանց սովորող աշակերտներ: Ընդհանուր առաջադիմությունը կազմում է 98%:

Այնուհետև խորհրդակցությունում ելույթ ունեցավ ԳԹԿ տնօրեն Յու. Քարամյանը՝ վերստին կարևորելով սովորողների գիտելիքների ու գնահատման չափորոշիչները:

ԿԳ փոխնախարար Մ. Համբարձումյանն իր ելույթում ընդգծեց տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաներին տիրապետման անհրաժեշտությունը ուսման որակի բարձրացման գործում, որն իրականացվում է տարբեր ծրագրերով՝ համագործակցելով ՀՀ մի քանի բուհերի հետ: Վերջիններս պատրաստակամություն են հայտնել մեր դպրոցներին տրամադրել համակարգիչներ ու սարքավորումներ: Տեղեկատվական տեխնոլոգիաների ներմուծման ուղղությամբ նախարարությունը համագործակցում է նաև Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի հետ, սակայն Մ. Համբարձումյանի խոսքով՝ Շահումյանի շրջանը դեռևս ակտիվ մասնակցություն չունի այդ գործում:

ԼՂՀ ԿԳ նախարար Ս. Ասրյանը, վերլուծելով նախորդ տարում կատարված աշխատանքները, կարևորեց այն դպրոցների առաջադիմությունը, որոնք նախորդ տարում տեսչության կողմից կատարված ստուգումների արդյունքում ստացել էին համապատասխան ցուցումներ: Նա առաջարկեց վերանայել ուսուցիչների մասնագիտական հնարավորությունները՝ աշակերտներին օլիմպիադաներին ներկայացնելու համար:

Վերջում ելույթ ունեցավ Շահումյանի շրջվարչակազմի ղեկավար Վ. Դանիելյանը՝ հաջողություններ մաղթելով նոր ուսումնական տարում:

Մարիամ ՓԻԼԱՖՅԱՆ

ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՔՆ Է

Մարտունու շրջանի ուսուցիչների օգոստոսյան խորհրդակցությանը մասնակցում էին ԼՂՀ ԿԳ նախարար Ս. Ասրյանը, շրջվարչակազմի ղեկավար Ն. Սողոմոնյանը, ԿԳՆ պետական կրթության տեսչության պետ Ս. Արզումանյանը, ԳԹԿ տնօրեն Յու. Քարամյանը, հանրակրթական դպրոցների տնօրեններ, փոխտնօրեններ, նախադպրոցական հիմնարկների ղեկավարներ:

Խորհրդակցության մասնակիցներին ողջունեց շրջվարչակազմի ղեկավար Նելսոն Սողոմոնյանը: Շրջանի ղեկավարը շնորհավորեց բոլորին նոր ուսումնականն սկսվելու կապակցությամբ: Անցած ուսումնական տարին կրթության ոլորտի համար նա համարեց բեղմնավոր, ինչի կապակցությամբ գոհունակություն հայտնեց ոլորտի պատասխանատուներին: Ուսուցիչների աշխատավարձի տարեցտարի բարձրացումն ու նկատելի առավելությունը այլ ոլորտների համեմատ՝ խոսում է իրականացվող աշխատանքի նկատմամբ պետական մոտեցման մասին, և սա պետք է ավելի մեծ պատասխանատվություն առաջ բերի ուսուցիչների մոտ, նշեց Ն. Սողոմոնյանը: Նրա խոսքով, եթե շատ ոլորտներում իրականացվող աշխատանքների արդյունքները երևում են կարճ ժամանակահատվածում, ապա մանկավարժի աշխատանքի գնահատման համար անհրաժեշտ են տարիներ: Շրջվարչակազմի ղեկավարը միաժամանակ ուշադրություն հրավիրեց դպրոցները պատշաճ գիտելիքներով զինված մասնագետներով ապահովելու խնդրին, կարևորեց տնօրենների ճիշտ աշխատանքը, կիրթ և օրենքի սահմաններում խնդիրներ լուծելու կարողությունը:

Կատարված աշխատանքների մասին հաշվետվությամբ հանդես եկավ կրթության բաժնի վարիչ Զորիկ Ղուլյանը: Համաձայն ներկայացված տվյալների՝ 2012-2013 ուստարում շրջանում գործել են պետական հովանավորությամբ 8 և ոչ պետական մեկ մանկապարտեզներ, որտեղ ընդգրկված էին 659 երեխաներ: Ալիբալիի, Գիշու, Խնուշինակի, Քերթի դպրոցներին կից գործել են նախադպրոցական խմբեր՝ 116 երեխայի ընդգրկմամբ:

Մանկապարտեզներում ուսումնադաստիարակչական աշխատանքները գնահատվում են բավարար, բայց չնայած դրան՝ «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթում հաղթող ճանաչվող չի եղել: Նոր ուսումնականում հանրակրթական դպրոցների 1-ին դասարան կհաճախեն մանկապարտեզների թողարկած 179 երեխաներ:

Հաշվետու տարում շրջանում գործել են 36 հանրակրթական դպրոցներ՝ 7 մասնաճյուղով, որից՝ 23 միջնակարգ, այդ թվում՝ 2-ը հոսքային, 13-ը՝ հիմնական: Սովորողների թիվը ուստարվա սկզբին եղել է 3621, վերջում՝ 3608 հոգի:

Անցած ուսումնականում հիմնանորոգվել է Մարտունու հ. 1 հոսքային դպրոցի շենքի մի մասը, կառուցվում են Նորշենի, Կ. Շուկայի և Ծովատեղի դպրոցական շենքերը: Բոլոր դպրոցներն ապահովվել են աշակերտական նստարաններով և մասնակիորեն՝ պահարաններով, ուսուցչական սեղաններով:

Նոր ուսումնականում կշարունակվի դպրոցների ապահովումը համակարգիչներով ու լաբորատոր սարքավորումներով: Դպրոցներում գործել են 31 համակարգչային կաբինետներ, 97 առարկայական և 104 մեթոդմիավորումներ: Իրականացվել են համալիր ստուգումներ, որոնց արդյունքում մինչև ստուգումներն առաջադիմությունը կազմել էր 80-100%, որակը 35-70%, իսկ ստուգումներից հետո առաջադիմությունը կազմել է 40-50%, որակը՝ 0-35%, ինչը խոսում է գնահատականների արհեստական բարձրացման մասին: Ձեկուցողի խոսքով՝ ուսուցիչների մի մասը հեղինակություն չի վայելում ինչպես հասարակության մեջ, այնպես էլ դպրոցում, ինչը բերում է անցանկալի հետևանքների:

Շրջանի 18 դպրոցներում 2012-2013 ուստարում ընդգրկված են եղել ներառական կրթության 45 և տնային ուսուցմամբ 34 աշակերտներ: Անցած ուսումնականում առանձնահատուկ կրթության կարիք ունեցող 9 աշակերտներ ավարտել են 9-րդ դասարանը, որոնք, ըստ օրենքի, ազատվել են քննություններից ու ստացել 9-ամյա կրթության վկայական:

Դպրոցական ավարտական քննություններն անց են կացվել շրջանում ստեղծված 6 քննակենտրոններում, իսկ միասնական քննությունները կենտրոնացվել են Ստեփանակերտ քաղաքում:

Անցած տարում աշխուժություն է նկատվել արտադասարանական, արտադպրոցական և ռազմամարզական միջոցառումների կազմակերպման գործում:

Օլիմպիադաների շրջանային փուլին մասնակցել են 280 աշակերտներ՝ 17 դպրոցներից: Հանրապետական փուլի արդյունքներով, ընդհանուր թիմային հաշվարկով շրջանը գրավել է 2-րդ տեղը՝ Ստեփանակերտից հետո:

2013-2014 ուստարվա նախապատրաստական աշխատանքներն սկսված են: Նորոգման նպատակով հատկացված մոտ 10 մլն դրամ գումարով ձեռք են բերվել շինանյութեր և ժամանակին առաքվել դպրոցներ: Մթերվել է դպրոցների ջեռուցման համար անհրաժեշտ վառելափայտը:

Խորհրդակցությունում ելույթ ունեցան Գիշու միջնակարգ դպրոցի փոխտնօրեն Ադելաիդա Օհանջանյանը, Սոսի միջնակարգ դպրոցի տնօրեն Մանուշ Վանյանը, Մարտունու հ. 1 հոսքային դպրոցի դասվար Էլզա Խաչատրյանը, Մարտունու հ. 2 մանկապարտեզի տնօրեն Իրինա Ղուկասյանը, շրջանի արհմիությունների նախագահ Էդիսոն Սերգեյանը:

Հանրակրթական դպրոցների 9-րդ և 12-րդ դասարանների շրջանավարտների պատրաստության որակի գնահատման շուրջ խոսեց ԳԹԿ տնօրեն Յու. Քարամյանը: Նա նշեց, որ քննությունների ժամանակ առանձին խախտումներ չեն արձանագրվել: ԳԹԿ տնօրենը նաև անդրադարձ կատարեց ընթացիկ և արտաքին, փորձնական ու ավարտական քննություններին, կանգ առավ երեխաների գնահատականների օբյեկտիվության հարցի վրա, ինչը պիտի համապատասխանի նրանց գիտելիքների մակարդակին:

Սոս Արզումանյանը հանգամանորեն խոսեց իրենց տեսչության կողմից իրականացված ստուգումների մասին, նշելով, որ բացթողումներն անհամեմատ շատ են ու անթույլատրելի: Նրա համոզմամբ՝ միայն մշտական վերահսկողությամբ, պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացմամբ հնարավոր կլինի դրանք լուծել:

Կրթության և գիտության նախարար Ս. Ասրյանը նշեց, որ բարեփոխումների հետ կապված՝ անհրաժեշտ աշխատանքները կատարված են: Կրթության որակի բարձրացման գործում նա կարևորեց ուսուցիչների վերապատրաստումը, ինչը հիմք կլինի հետագա ատեստավորման և աշխատանքային գործունեության որակի բարձրացման համար: Վերապատրաստմանն ու ատեստավորմանը պիտի մասնակցեն բոլոր ուսուցիչները: Այն ուսուցիչները, ովքեր ատեստավորման պահանջներին չեն համապատասխանում, պիտի հեռանան դպրոցից: Նախարարն անհրաժեշտ համարեց ուսուցման նոր մեթոդների կիրառումը, որը պիտի իրականացվի առաջավոր ու սեփական փորձի համադրությամբ:

Նոր ուսումնական ռազմավարական ծրագրի (ՆՈՒՌ) համաձայն՝ այս ուսումնականում անհատական օգտագործման համակարգիչներ կտրամադրվեն նաև շրջկենտրոնների 1-4-րդ դասարանների աշակերտներին: Այս շեշտումով Ս. Ասրյանը նշեց, որ շարունակական է լինելու դպրոցների նյութատեխնիկական հագեցվածության գործընթացը: Նա ուշադրություն հրավիրեց նաև կարգապահության խնդրին, ինչը դպրոցում իրականացվող աշխատանքների հիմքն է:

Վերջում նախարարը շնորհավորեց բոլորին նոր ուսումնականի կապակցությամբ ու նորանոր հաջողություններ մաղթեց մատաղ սերնդի դաստիարակության պատվավոր գործում:

Խորհրդակցության ավարտից հետո հանրակրթական դպրոցների ուսուցիչների հետ անցկացվեցին մասնախմբային պարապմունքներ:

Կարինե ԴԱՎԱՄՅԱՆ

ՈՒՍՄԱՆ ՈՐԱԿԻՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆԸ՝ ԼՈՒՐՋ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթություն իրականացնող ուսումնական, նախադպրոցական և արտադպրոցական հաստատությունների ղեկավարների և ուսուցիչների համատեղ խորհրդակցությանը, որը տեղի ունեցավ Հադրութի մշակույթի տան դահլիճում, մասնակցում էին ԼՂՀ ԿԳ նախարար Սլավա Ասրյանը, փոխնախարար Միքայել Համբարձումյանը, նախարարության կրթության տեսչության պետ Սոս Արզումանյանը, ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանը, Հադրութի վարչակազմի ղեկավար Վալերի Գևորգյանը և պատասխանատու այլ անձինք:

2012-2013 ուսումնական տարում կատարված աշխատանքների և 2013-2014 ուսումնական տարվա անելիքների մասին զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի կրթության բաժնի վարիչ էդիկ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ:

Անցած ուսումնական տարում շրջանում գործել է 13 միջնակարգ, 12 հիմնական դպրոց և 4 մասնաճյուղ՝ Առաքելի, Թաղասեռի, Խանձաձորի և Խծաբերդի հիմնական դպրոցներին կից, ուր հաճախել է 2012 աշակերտ: Հիմնական կրթության վկայականներ են ստացել 189 աշակերտ և միջնակարգ կրթության վկայական՝ 173 շրջանավարտ:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 37 երեխայի համար իրականացվել է ներառական կրթություն: Շրջանում սովորողների կրթության և դաստիարակության գործով զբաղվում է 542 ուսուցիչ: Դպրոցներում ուսուցչական կադրերի թափուր տեղերի համար հայտարարվել է մրցույթ, որը պետք է կայանա մինչև օգոստոսի 28-ը:

Շրջանում գործում է մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն՝ 25 խմբակով, 320 երեխայի ընդգրկմամբ: Երաժշտական դպրոցում գործում է 5 խմբակ՝ 68 աշակերտի ներգրավմամբ: Հադրութի մանկապատանեկան մարզադպրոցում գործում է 20 խմբակ՝ 262 երեխայի ընգրկմամբ, «Տողի արվեստի դպրոց» ՊՈԱԿ-ը՝ մոտ 150 երեխայի ընդգրկումով:

Շրջանում գործում է 6 մանկապարտեզ, որից 3-ը պետական՝ Ազոխ, Առաքել և Դրախտիկի համայնքներում, 3-ը հովանավորչական (ՀՕՄ)՝ Մեծ Թաղերում և Տողում, 1-ը ավետարանչական՝ Հադրութ քաղաքում: Նախատեսվում է մինչև տարվա վերջ ավարտին հասցնել Տումի գյուղում և Հադրութ քաղաքում մանկապարտեզների շենքերի շինարարությունը:

Մանկապարտեզների բացը լրացնելու համար նախապատրաստական խմբակներ են գործել Հադրութի, Տումու, Դրախտիկի դպրոցներում:

Դպրոցական նոր շենքեր են կառուցվում նաև Ազոխ և Ուխտաձոր գյուղերում:

Բաժնի վարիչը միաժամանակ անդրադառնալով շրջանում գործող արտադպրոցական հիմնարկների աշխատանքներին: Նա առաջ քաշեց մի շարք խնդիրներ, որոնք վերաբերում են 2013-2014 ուսումնական տարվան:

Մտքերի փոխանակությանը մասնակցեցին Հադրութի Մ. Մանվելյանի անվան դպրոցի տնօրեն Արթուր Մինասյանը, Ակնաղբյուրի Վ. Ամիրջանյանի անվան դպրոցի տնօրեն Լիրա Ասրյանը, «Հադրութի համաճարակաբանության և հիգիենայի բաժին» ՊՈԱԿ-ի տնօրեն Արևիկ Բալայանը, Մարիամաձորի միջնակարգ դպրոցի փոխտնօրեն Սվետլանա Գրիգորյանը, ԼՂՀ ոստիկանության Հադրութի շրջանային բաժնի անչափահասների գծով տեսուչ Գուրգեն Բեգլարյանը, Հադրութի շրջանի վարչակազմի ղեկավար Վալերի Գևորգյանը, որոնք իրենց ելույթներում մի շարք առաջարկություններ արեցին դպրոցում ուսման որակի և արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Այնուհետև ԼՂՀ ԳԹԿ տնօրեն Յու. Քարամյանը, գնահատելով դպրոցներում անցկացվող քննությունները, ասաց, որ դրանք կազմակերպական առումով դրական են և հավաստում են, որ դպրոցների տնօրեններն իրենք էլ կարող են դրանք անցկացնել: Ըստ ԳԹԿ տնօրենի՝ մտահոգության տեղիք են տալիս ոչ այնքան անբավարար արդյունքները, որքան՝ «լավերը» և «գերազանցները», որոնց քանակը չի համապատասխանում դասամատյանում գրանցված գնահատականներին:

Խորհրդակցությունում ելույթ ունեցավ ԼՂՀ ԿԳ նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչության պետ Սոս Արզումանյանը, որը հիմնականում կանգ առավ ինչպես իրենց, այնպես էլ կրթության շրջանային բաժնի տեսուչների կողմից դպրոցներում կատարված ստուգումների արդյունքների վրա: Փոխնախարար Մ. Համբարձումյանն անդրադարձավ տեղեկատվական տեխնոլոգիաների արմատավորման ուղղությամբ տարվող աշխատանքի հարցերին:

Խորհրդակցության արդյունքներն ամփոփեց ԼՂՀ ԿԳ նախարար Սլավա Ասրյանը: «Այսօրվա խորհրդակցությունն անցնում է գործարար մթնոլորտում,- ասաց նա:- Առաջ քաշված մի շարք հարցեր մեր կողմից քննարկվելուց հետո լուծում կստանան: Չնայած սեպտեմբերի 1-ը կիրակի է, բայց մեր բոլոր դպրոցներում պետք է անցկացվեն ինչպես Ղարաբաղյան շարժման 25-ամյակին, այնպես էլ ԼՂՀ հռչակման 22-րդ տարեդարձին վերաբերող դասեր, և այդ օրը բոլոր դպրոցների գործունեությունը հարկավոր է նպատակաուղղել այդ տոնական միջոցառումների անցկացմանը»: Նախարարը միաժամանակ իր մտահոգությունը հայտնեց Հադրութի շրջանի դպրոցներում ուսման ցածր որակի, առարկայական օլիմպիադայի արդյունքների վերաբերյալ: Շրջանի մանկավարժական մի շարք կոլեկտիվներ դեռևս իրենց կոչման բարձրության վրա չեն: Կոլեկտիվի ղեկավարը պետք է լինի այդ կոլեկտիվի առաջին աշխատողը: Այսօր մեծ դժվարությունների առաջ ենք կանգնած սերնդափոխության հարցում: Դպրոցներում այդ ուղղությամբ համարյա աշխատանք չի տարվում: Նա ներկաների ուշադրությունը հրավիրեց նաև աշխատանքային և կատարողական կարգապահության, ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման, դասագրքերի տրման և նրանց օգտագործման հարցերի վրա: Ս. Ասրյանը շնորհավորեց խորհրդակցության մասնակիցներին նոր՝ 2013-2014 ուսումնական տարվա և ԼՂՀ հռչակման 22-րդ տարեդարձի առթիվ և համոզմունք հայտնեց, որ կրթության շրջանային բաժինը, համակարգի ուսուցչական կոլեկտիվներն ամեն ինչ կանեն մատաղ սերնդի կրթության գործը պատշաճ բարձրության վրա դնելու համար:

էդիկ ԴԱՎԹՅԱՆ

ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՏՐՎԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Մարտակերտի ուսուցիչների օգոստոսյան խորհրդակցությանը ներկա էին ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը, փոխնախարար Միքայել Համբարձումյանը, ԿԳ նախարարության պետական տեսչության պետ Սոս Արզումանյանը, ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանը, շրջվարչակազմի ղեկավար Վլադիկ Խաչատրյանը, շրջանի այլ կառույցների ներկայացուցիչներ, համայնքի ղեկավարներ, դպրոցի տնօրեններ ու վաստակաշատ ուսուցիչներ:

Խորհրդակցությունը վարում էր շրջվարչակազմի ղեկավար Վլադիկ Խաչատրյանը: Շնորհավորելով ներկաներին Գիտելիքի և դպրության օրվա և ԼՂՀ հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ, վարչակազմի ղեկավարը մաղթեց մեր պետականության հետագա ամրապնդում և հաջողություններ՝ կրթական համակարգում:

Այնուհետև շրջանի կրթության ոլորտում իրականացրած աշխատանքների մասին հաշվետվություն ներկայացրեց կրթության բաժնի վարիչ Ժաստեն Դավթյանը: 2012-2013 ուստարում շրջանում գործել են 27 միջնակարգ, 9 հիմնական, Մաղավուզի, Նոր Մարաղայի, Մատաղիսի, Քոլատակի, Ներքին Հոռաթաղի միջնակարգ դպրոցների մասնաճյուղերը՝ Վարնկաթաղում, Նոր Ջրաբերդում, Տոնաշենում, Խնկավանում, Թբլղուում և Ծաղկաշենում: Ուսման գործընթացում ընդգրկված էին ուսումնական տարվա սկզբին՝ 3187, տարեվերջին՝ 3157 երեխաներ՝ 352 դասարան-համակազմերում, որոնցից 7-ը ավագ դպրոցի հոսքային դասարաններն էին՝ 136 աշակերտի ընդգրկումով՝ Մարտակերտի Վլ. Բալայանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցի բազայի վրա:

Առաջին դասարան են հաճախել 303 աշակերտներ, որոնցից 6-ը մնացել են նույն դասարանում՝ դասընթացը կրկնելու: Ուսումնական տարվա վերջում 3157 աշակերտից հաջորդ դասարան են փոխադրվել 2979-ը, 12-րդ դասարանն ավարտել՝ 156, նույն դասարանում մնացել՝ 21 հոգի, վերաքննություն ունեին 120 աշակերտներ: Լրիվ միջնակարգ կրթություն ստացած 156 12-րդցիներից 33-ը կամ 21%-ը (այդ թվում 9 հոգի՝ 2 առարկայից) լրացուցիչ քննությունների արդյունքում են ատեստատ ստացել: Կրթություն ստանալու իրավունքից օգտվել են նաև հատուկ պայմանների կարիք ունեցող 64 երեխաներ՝ անցած տարվա 48-ի դիմաց: Ընթացիկ ուսումնական տարում շրջանում գործող մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի 35 խմբակներում ընդգրկված են եղել 420 սովորողներ:

Անդրադառնալով նախադպրոցական կրթությանը՝ Ժ. Դավթյանը նշեց, որ շրջանում գործող 6 պետական (Մարտակերտի հ. 1, Հաթերքի, Մատաղիսի, Թալիշի, Առաջածորի, Վանքի) մանկապարտեզների շարքը համալրել են Մեծ Շենի մանկապարտեզը և Հաթերքի մանկապարտեզի մասնաճյուղը՝ 1-ական խմբերով, որոնց վերանորոգման աշխատանքներն ապահովել են համագյուղացի հովանավորները: Հովանավորի միջոցներով շարունակում են գործել Չափարի ու Մարտակերտի Ճանապազյանի անվան մանկապարտեզները: Ընդհանուր առմամբ, բոլոր մանկապարտեզներում իրենց նախնական կրթությունն ու դաստիարակությունն են ստանում 584 սաներ, որոնք կազմում են շրջանի 3-6 տարեկան երեխաների 50%-ը: Որպես այլընտրանք՝ շրջանի Մաղավուզի, Գետավանի, Վերին Հոռաթաղի, Ներքին Հոռաթաղի, Վաղուհասի միջնակարգ դպրոցներին կից գործել են նախադպրոցական խմբեր՝ 71 երեխաների ընդգրկմամբ: Ժ. Դավթյանն առաջարկեց սկսված ուսումնականում Չլդրանի և Նոր Սեյսուլանի դպրոցներում ևս բացել նախապատրաստական խմբեր՝ հաշվի առնելով 5 տարեկան երեխաների պահանջվող քանակությունը (10 հոգի) տեղերում: Շարունակվում են մանկապարտեզի շենքի կառուցման աշխատանքները Հարգոմերում: Առաջարկեց մանկապարտեզներ բացել նաև Կոճողոտի, Վաղուհասի համայնքներում, որտեղ կան նախադպրոցական տարիքի համապատասխանաբար՝ 27 և 68 երեխաներ և դպրոցական նախկին շենքեր, որոնք վերանորոգելու դեպքում կարելի է ծառայեցնել որպես մանկապարտեզի շենք:

Անցած ուսումնական տարում շրջանում կրթադաստիարակչական գործունեությամբ զբաղվել է 825 ուսուցիչ: Իրենց գործունեությունն էին շարունակում 44 թոշակառու ուսուցիչներ: 8 ուսուցիչ երեխաների կրթության ու դաստիարակության գործում ունեցած ավանդի համար «Վաստակավոր ուսուցիչ» կոչմանն են արժանացել. Նիկոլայ Սաղյան (Չափարի միջնակարգ դպրոցի քիմիայի և կենսաբանության ուսուցիչ), «Երախտագիտություն» մեդալի՝ Ասյա Մանգասարյան (Ճանկաթաղի մ/դ տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ) և ԼՂՀ Վարչապետի հուշամեդալի՝ Էլեոնորա Գրիգորյան (Հաթերքի մ/դ տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ), Ռուզաննա Բալայան (Մաղավուզի մ/դ ռուսաց լեզվի ուսուցչուհի), Աննա Առաքելյան (Մարտակերտի Վլ. Բալայանի անվան հ. 1 մ/դ դասվար), Ֆլորա Բարսեղյան (Քոլատակի մ/դ տնօրենի ուսումնական գծով տեղակալ), Էլմիրա Խաչատրյան (Դրմբոնի մ/դ հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի), Նաիրա Առստամյան (Վերին Հոռաթաղի մ/դ տնօրեն): Ձեկուցողը նշեց, որ այսօր ուսուցչի դերն այլ նշանակություն է ձեռք բերում, մասնավորապես՝ աշակերտներին ուսուցչի գործունեության ոլորտի օբյեկտից հարկավոր է փոխարկել ուսումնական նյութի յուրացման համար անհրաժեշտ և սեփական գործունեության ոլորտի սուբյեկտի, որովհետև աշակերտի ուսուցումլ ու զարգացումը կատարվում են միայն նպատակաուղղված ուսումնական գործունեության ընթացքում: Սակայն համագործակցային մեթոդներին, գնահատման նոր համակարգի ներդրմանը, ծրագրային, չափորոշչային փոփոխություններին որոշ ուսուցիչներ դեռևս լավ չեն տիրապետում: Դա են վկայում ԿԳ նախարարության պետական տեսչության և շրջանի կրթության բաժնի կողմից կատարված ստուգումները:

Ընթացիկ ուսումնական տարում ԿԳ նախարարության պետական տեսչության կողմից կատարվել են համակողմանի ստուգումներ Առաջածորի, Մարտակերտի հ. 1, Վերին Հոռաթաղի, Հարգոմերի, Թալիշի, Մատաղիսի, Գետավանի միջնակարգ դպրոցներում: Ժ. Դավթյանը կարևորեց ուսուցչի՝ իր դասավանդած առարկայի՝ գիտության արդի մակարդակին համապատասխան խորհրդատվությունը, հոգեբանամանկավարժական ու մեթոդական պատրաստվածությունը, համակարգին տիրապետելը, նաև՝ անձնային որակները: Ժ. Դավթյանը մեծապես կարևորեց ինքնակրթությամբ զբաղվելը, որը մասնագիտական պատրաստվածության առաջին նախապայմանն է: Անցած ուսումնական տարում ևս վերապատրաստման դասընթացներ և սեմինար-պարապմունքներ են անցկացվել, որոնց այս ուսումնականում մասնակցել են համակարգի 341 աշխատողներ, ինչպես նաև նախաատեստավորման վերապատրաստման դասընթացներ, որին հայտագրված 152 հոգուց մասնակցել են 150 ուսուցիչներ, 2 հոգի հարգելի պատճառով բացակայել են: Բոլորն էլ ճանաչվել են իրենց պաշտոնին համապատասխանող, որից 63 հոգի կամ ատեստավորված ուսուցիչների 42%-ն անցել է միաձայն, 54-ը կամ 36%-ը՝ 4 կողմ 1 դեմ ձայնով, մինչդեռ 32 ուսուցիչներ՝ 22%-ը, պաշտոնին համապատասխանող են ճանաչվել վերապահումով:

Ուսուցչի պատրաստվածության լավագույն գնահատականը նրա աշակերտների ցուցաբերած հաջողություններն են: Շրջանի հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորող 3157 աշակերտներից գերազանց են ընդամենը 170-ը, ընդ որում՝ նախորդ տարվա համեմատ փոփոխություն չի արձանագրվել, անառաջադեմ 76-ը՝ նախորդ տարվա 103-ի դիմաց, առաջադիմությունը 97,5%՝ անցած ուստարվա 96,7%-ի դիմաց:

Առարկայական օլիմպիադաներում, Մայիսյան եռատոնին և Արցախյան շարժման 25-ամյակին նվիրված շարադրությունների մրցույթներում հայոց լեզվից և գրականությունից բարձր արդյունքներ են ցուցաբերել Մարտակերտի հ. 1 մ/դ-ից՝ Նատաշա Պողոսյանի, Անյուտա Մնացականյանի, Վիոլետա Իսրայելյանի, Հաթերքի մ/դ-ից՝ Նարինե Միրզոյանի, Առաջածորի մ/դ-ից՝ Նելլի Աթանեսյանի, Թագուհի Ալավերդյանի, Նոր Այգեստանից՝ Լուսինե Միրզոյանի, Նոր Սեյսուլանի մ/դ-ից՝ Նունե Միրզոյանի, Թալիշի մ/դ-ից՝ Հերմինե Սահակյանի, Ներքին Հոռաթաղի մ/դ-ից՝ Նինա Դանիելյանի աշակերտները: Ժ. Դավթյանն ասաց, որ չնայած արձանագրված հաջողություններին, այնուամենայնիվ, մեր ուսուցիչներից շատերը դպրոցում, նույնիսկ դասապրոցեսի ընթացքում շարունակում են բարբառով արտահայտվել, ինչն անթույլատրելի է, քանի որ աշակերտները գրական հայերենին առնչվում են հիմնականում դպրոցում:

Որոշակի դրական տեղաշարժ է արձանագրվել բնագիտամաթեմատիկական առարկաներից օլիմպիադային մասնակցած աշակերտների թվի և ցուցաբերած արդյունքներում. այդ առումով պետք է նշել ուսուցիչներ Նվարդ Վանյանի, Նունե Գասյանի, Արմինե Ղահրամանյանի, Մարինե Պողոսյանի, Ժիրայր Ասրյանի (Հաթերքի, Մարտակերտի հ. 1, Մոխրաթաղի, Նոր Սեյսուլանի, Վաղուհասի մ/դ-ներ՝ աշխարհագրություն առարկայից), Ժաստեն Դավթյանի, Լիլիթ Ազիզյանի, Նիկոլայ Սաղյանի (Մարտակերտի հ. 1, Վաղուհասի, Չափարի մ/դ՝ քիմիա, կենսաբանություն առարկաներից), Կարինե Գրիգորյանի (Մարտակերտի հ. 1 մ/դ, մաթեմատիկա առարկայից), Ռուզաննա Հարությունյանի (Մարտակերտի հ. 1 մ/դ, ինֆորմատիկա առարկայից), Արշալույս Գաբրիելյանի (Մարտակերտի հ. 1 մ/դ, պատմություն առարկայից)՝ դրվատանքի արժանի աշխատանքը: Բայց անցած ուսումնականում ևս ռուսաց, օտար լեզուներից առաջնակարգ տեղեր, իսկ ֆիզիկայից նույնիսկ ակտիվ մասնակցություն չի եղել:

Ընդհանուր առմամբ, օլիպիադայի շրջանային փուլին ունեցել ենք 167 մասնակիցներ՝ 31 դպրոցներից, նախորդ տարվա 30 դպրոցներից 150-ի փոխարեն: 31 աշակերտներ մասնակցել են 2 առարկայից, 15-ը՝ 3, 4-ը՝ 4 առարկայից. ընդամենը 249 մասնակցություն՝ նախորդ տարվա 199-ի դիմաց:

10 առարկայից 39 աշակերտներ զբաղեցրել են առաջնակարգ (I, II, III) տեղեր, ևս 32 հոգի ցուցաբերել են ակտիվ մասնակցություն, նախորդ տարվա համապատասխանաբար՝ 34-ի և 15-ի փոխարեն:

Շրջանի օլիմպիական թիմը՝ 46 աշակերտներով (ընդ որում՝ 6 աշակերտ մասնակցել է 2 առարկայից), ի տարբերություն նախորդ տարվա 2 առաջնակարգ տեղի՝ հանրապետական փուլում արձանագրել է 1 երկրորդ, 3 երրորդ տեղ՝ 12 ակտիվ մասնակցություն: 5 աշակերտներ 4 առարկայից մասնակցել են ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլին, ակտիվ մասնակցության համար նրանցից երկուսն արժանացել է գովասանագրի աշխարհագրությունից, Նոր Սեյսուլանի մ/դ 10-րդ դասարանի աշակերտուհի Լուսինե Մինասյանը (ուսուցչուհի՝ Մ. Պողոսյան), հայոց լեզվից՝ Հաթերքի մ/դ 10-րդ դասարանի աշակերտուհի Արշալույս Գրիգորյանը (ուսուցչուհի՝ Ն. Միրզոյան), երեքը զբաղեցրել են առաջնակարգ տեղեր. Լիանա Իսախանյան՝ նախնական զինվորական պատրաստություն, Թալիշի մ/դ, 10-րդ դասարան, ուսուցիչ՝ Ֆ. Ապրեսյան (1-ին տեղ), Լիլիթ Հարությունյան՝ հայ գրականություն, Մարտակերտի հ. 1 մ/դ, 11-րդ դասարան, ուսուցչուհի՝ Ն. Պողոսյան (2-րդ տեղ), Սիրանուշ Օհանյան՝ աշխարհագրություն, Հաթերքի մ/դ, 12-րդ դասարան, ուսուցչուհի՝ Ն. Վանյան (3-րդ տեղ): Նշված աշակերտներն իրենց հաջողությունների համար արժանացել են ԼՂՀ նախագահի ընդունելությանն ու արժեքավոր նվերների:

Շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչն իր զեկույցում անդրադարձավ նաև ներդպրոցական վերահսկողության ուժեղացմանը, մեթոդմիավորումների գործունեությանը, դասաբաշխման ժամանակ նրանց ընդգրկվածության կարևորությանը, դպրոցավարությանը, ուսուցիչների համակարգչային գրագիտությանը, դպրոց-ծնող-հասարակություն կապի ամրապնդմանը և այլ կարևոր հարցերի:

Այնուհետև ելույթներով հանդես եկան Վերին Հոռաթաղի, Առաջածորի, Թալիշի, Գետավանի դպրոցների տնօրենները, ովքեր ներկայացնելով դպրոցի խնդիրները, ԿԳ պետական տեսչության կողմից հայտնաբերված թերացումները, նշեցին, որ այս ուսումնականում կփորձեն ուղղել դրանք: Ելույթ ունեցողները կարևորեցին ստուգումների ժամանակ անաչառությունը և հետևողականությունը, որպեսզի իր մասնագիտությանը լավ և վատ տիրապետող ուսուցիչների գնահատականները չնույնանան՝ մանկավարժների մոտ բողոքի տեղիք տալով:

ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանն իր խոսքում ասաց, որ ընթացիկ գրավորների տրման ժամանակ պետք է վերհանվեն աշակերտների իրական գիտելիքները, ուստի պետք է վերահսկել աշակերտների ինքնուրույնությունը, այնինչ որոշ դպրոցների գրավորներում նկատելի են նույնատիպ սխալներ, ինչը հուշում է թույլ վերահսկողության մասին:

ԿԳ նախարարության պետական տեսչության պետ Սոս Արզումանյանը, խոսելով տեսչության կատարած ստուգումների մասին, ասաց, որ տնօրենների կատարած դասալսումներն անպայման պետք է վերլուծվեն ուսուցիչների հետ և ձևական բնույթ չկրեն: Փոխնախարար Մ. Համբարձումյանը ներկայացրեց կրթության բնագավառում արձանագրված հաջողությունները, կատարվելիք փոփոխությունները, մասնավորապես նորագույն տեխնոլոգիաների ներմուծում՝ սկսած առաջին դասարանից: Առաջին դասարանցիներին կտրվեն նեթբուքեր: Այստեղ արդեն դասվարների համակարգչային իմացության հարցն է առաջանում: Նորամուծություններից է «Ռոբոտաշինությունն սկսվում է դպրոցից» նախագծի իրականացումը, «Դիջիտեք» համակարգչային ծրագրի գործարկումն այն համայնքներում, որոնք ապահովված են համացանցով:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ ԿԳ նախարար Սլավա Ասրյանը՝ շնորհավորելով նոր ուսումնական և ԼՂՀ հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ: Այս ուսումնականում կշարունակվի շախմատ առարկայի ուսուցումը: Նախարարը հանձնարարեց ուսումնական գործընթացը կազմակերպել պետական չափորոշիչներին համապատասխան: Իսկ որոշ դպրոցների վերանորոգման, լաբորատոր սարքավորումներով հագեցվածության հարցերը կլուծվեն ժամանակի ընթացքում: Նա ասաց, որ անհրաժեշտ է օգտագործել առկա միջոցները՝ ուսուցման աշխատանքները կազմակերպելու գործում: Սլավա Ասրյանը մեծ տեղ տվեց ներդպրոցական վերահսկողությանը. դրան է միտված դպրոցի տնօրենների կատարած դասալսումների՝ քանակի և որակի հանդեպ խստապահանջությունը: ԿԳ նախարարն անդրադարձավ նաև աշակերտների մասնագիտական կողմնորոշման հարցին՝ ասելով, որ հետագայում հատկապես բնագիտական գծով ուսուցիչների մեծ պահանջարկ է լինելու, քանի որ այդ մասնագիտությունների գծով դիմորդներ կամ չկան, կամ էլ շատ քիչ են: Ս. Ասրյանը հատկապես գյուղական համայնքների դպրոցների ուսուցիչներին հանձնարարեց նախապատրաստել ու կողմնորոշել աշակերտներին մասնագիտության ընտրության հարցում: Մտահոգիչ է նաև Իվանյանի անվան վարժարան դիմորդների քիչ քանակը, ինչպես նաև դիմորդների գիտելիքների ցածր մակարդակը:

Անդրադառնալով առարկայական օլիմպիադայում արձանագրված հաջողություններին՝ ԿԳ նախարարն առաջնությունը տվեց լավագույն ուսուցիչներին: Նա, սակայն, մտահոգություն հայտնեց այն առնչությամբ, որ ոչ բոլոր դպրոցներից են օլիմպիադաներին մասնակցություն ցուցաբերում: Ս. Ասրյանը խոսեց նաև կատարողական կարգապահության, մանկավարժական կոլեկտիվներում բարոյահոգեբանական մթնոլորտի պահպանման, դասաբաշխման մասին: Վերջում նախարարը պատասխանեց հնչեցված հարցերին:

Ռեգինա ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Օգոստոսի 28-ին Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոցում անցկացվեց ուսուցիչների ամենամյա օգոստոսյան խորհրդակցությունը, որի աշխատանքներին մասնակցեցին ԼՂՀ ԿԳ Նախարար Սլավա Ասրյանը, փոխնախարար Միքայել Համբարձումյանը, կրթության պետական տեսչության պետ Սոս Արզումանյանը, ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանը, ովքեր ելույթ ունեցան և քննարկեցին անցած ուսումնական տարվա ընթացքում իրենց կողմից շրջանի դպրոցներում կատարված ստուգումների արդյունքները:

Շուշիի շրջանի կրթական համակարգի 2012-2013 ուսումնական տարվա գործունեության մասին հաշվետվություն ներկայացրեց կրթության բաժնի վարիչ Իրինա Սարգսյանը: Հաշվետու ժամանակաընթացքում շրջանում գործել են 1 ավագ, 4 միջնակարգ և 3 հիմնական դպրոցներ, որտեղ ընդգրկված էին 717 աշակերտներ՝ 64 դասարան-կոմպլեկտներում:

Ըստ դպրոցների կոմպլեկտների՝ աշակերտների քանակը հետևյալն էր.

- Աբովյանի անվան հիմնական դպրոց՝ 17 դասարան-կոմպլեկտ, 378 աշակերտ
- Մուրացանի անվան ավագ դպրոց՝ 10 դասարան-կոմպլեկտ, 163 աշակերտ
- Քարին տակի միջն. դպրոց՝ 12 դասարան-կոմպլեկտ, 108 աշակերտ
- Եղծահողի միջն. դպրոց՝ 5 դասարան-կոմպլեկտ, 16 աշակերտ
- Հին Շենի հիմնական դպրոց՝ 4 դասարան-կոմպլեկտ, 11 աշակերտ
- Լիսագորի միջն. դպրոց՝ 5 դասարան-կոմպլեկտ, 19 աշակերտ
- Մեծ Շենի միջնակարգ դպրոց՝ 5 դասարան-կոմպլեկտ, 16 աշակերտ
- Քիրսավանի հիմնական դպրոց՝ 2 դասարան-կոմպլեկտ, 6 աշակերտ:

Շուշիում գործում են նաև Դանիել Ղազարյանի անվան մասնագիտացված երաժշտական դպրոցը՝ 12 դասարանով, 102 աշակերտների ընդգրկմամբ և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնը՝ 23 խմբակներով, 230 աշակերտների ընդգրկմամբ: Շրջանում գործում են 3 մանկապարտեզներ, որից 1-ը՝ Քարին տակ գյուղում՝ պետական կարգավիճակով, 2-ը Շուշիում՝ Ավետարանչական կազմակերպության և ՀՕՄ-ի հովանավորությամբ:

Գյուղական բնակավայրերի դպրոցները բարձրագույն կրթությամբ մասնագետներով համալրելու նպատակով հայտարարվել և անց են կացվել մրցույթներ: Ներկա դրությամբ այս հարցն էլի հանդիսանում է օրակարգային, որովհետև ժամանակի քիչ լինելու պատճառով (առանձնապես՝ քիմիա, կենսաբանություն, պատմություն, աշխարհագրություն առարկաներից) գյուղական դպրոցներում աշխատել ցանկացողներ չկան:

Շրջանի բոլոր դպրոցներում գործում են համակարգչային կաբինետներ: Անցած ուսումնականում Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի համակարգչային կաբինետը համալրվել է 31 նոր համակարգչով, Քարին տակի միջնակարգ դպրոցը՝ 3:

Բոլոր դպրոցներում մեթոդմիավորումների կողմից կազմակերպվել են բաց դասեր, դաս-միջոցառումներ, մանկավարժական ընթերցումներ: Դ. Ղազարյանի անվան և Լիսագորի միջնակարգ դպրոցներում անց են կացվել մեթոդմիավորման փնջային նիստեր, որտեղ կազմակերպվել են բաց դասեր, լսվել զեկուցումներ:

Տարվա ընթացքում ապահովվել է շրջանի ուսուցիչների մասնակցությունը նախարարության կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

Ժամանակին ճշտվել և ԳԹԿ են ներկայացվել միասնական, պետական ավարտական և ավարտական քննություններին մասնակցող աշակերտների ցուցակները:

ԳԹԿ-ի կողմից շրջանի դպրոցների տարբեր դասարաններում անց են կացվել արտաքին ընթացիկ գնահատում և փորձնական քննություններ տարբեր առարկաներից: Արտաքին ընթացիկ գնահատման արդյունքում ունենք՝ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին 61 % առաջադիմություն, 18 % որակ, մարտ-ապրիլ ամիսներին՝ 67 % առաջադիմություն, 12 % որակ:

Նոյեմբերին ԿԳ նախարարության պետական տեսչության կողմից համակողմանի ստուգումներ են անցկացվել Մեծ Շենի, Հին Շենի և Քարին տակի միջնակարգ դպրոցներում: Ստուգումների արդյունքում դպրոցների աշխատանքները գնահատվել են բավարար:

Հունվարին հանրակրթական դպրոցներում կազմակերպվել է առարկայական օլիմպիադայի դպրոցական փուլը:

Փետրվարին կազմակերպվել և անց է կացվել առարկայական օլիմպիադայի շրջանային փուլը, որին մասնակցել են 63 աշակերտներ:

Շրջանի գյուղական վայրերի դպրոցների աշակերտները նույնպես ակտիվ մասնակցություն են ունեցել օլիմպիադայի շրջանային փուլին: Հաղթող ճանաչված 17 աշակերտներ մասնակցել են օլիմպիադայի հանրապետական փուլին:

Շրջանում կազմակերպվել և անց է կացվել «Կենգուրու-2013» միջազգային մաթեմատիկական խաղ-մրցույթը:

Խ. Աբովյանի և Մուրացանի անվան դպրոցների աշակերտներն ակտիվ մասնակցություն են ունեցել ստեղծագործական շարադրությունների և աստվածաշնչի տարբեր մրցույթների հանրապետական փուլերին, որտեղ Արցախյան շարժման 25-ամյակին նվիրված աստվածաշնչի մրցույթում Մուրացանի անվան ավագ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Լիլիթ Ավանեսյանը գրավել է առաջին տեղ, իսկ 11-րդ դասարանի աշակերտուհի Ելենա Պետրոսյանն Ազգային Ժողովի հովանու ներքո անցկացված աստվածաշնչի 6-րդ մրցույթ-փառատոնում գրավել է 2-րդ տեղը:

Պատշաճ մակարդակի վրա է արտադասարանական աշխատանքների կազմակերպման դրվածքը շրջանի բոլոր դպրոցներում:

Տարվա ընթացքում կազմակերպվել և անց են կացվել տարաբնույթ միջոցառումներ: Դպրոցներում մեծ ուշադրություն է դարձվում ռազմահայրենասիրական և ֆիզիկական դաստիարակությանը: Ըստ նախօրոք հաստատված կարգացուցակի, աշակերտները հանդիպումներ են ունեցել կցված զորամասերի հետ, ծանոթացել զինվորական կյանքին ու կենցաղին: Շրջանի զինղեկները պարտադիր մասնակցություն են ունեցել Կրթության և գիտության նախարարության կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին: Ապրիլ ամսին անց է կացվել «Արծվիկ» ռազմամարզական խաղերի շրջանային փուլը, որտեղ հաղթող ճանաչված Մուրացանի անվան ավագ դպրոցի թիմը մասնակցել է խաղերի հանրապետական փուլին:

Հուլիս ամսին շրջանի դպրոցների 10-րդ դասարանների տղաները մասնակցել են ԿԳ նախարարության կողմից կազմակերպված «Ասպետ» ռազմամարզական ճամբարին:

Շրջանի մարզական թիմերն ակտիվ մասնակցություն են ունեցել հանրապետական բոլոր մրցումներին:

Հունիս ամսում դպրոցների 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարանների աշակերտները քննություններ են հանձնել՝ 4-րդում՝ երկու, 9-րդում և 12-րդում՝ վեց առարկաներից: Այս տարի, բացի 9-րդ դասարանի «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա» առարկաներից, որոնց քննությունները կազմակերպվել են կենտրոնացված՝ Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի քննական կենտրոնում, մնացած բոլոր քննություններն անց են կացվել և ստուգվել դպրոցներում: Ավարտական քննություններ են հանձնել 78 աշակերտներ, որոնցից 6 աշակերտներ 4 առարկայից մնացել են վերաքննության: Պետական ավարտական քննություններ են հանձնել 37 աշակերտներ, որոնցից միասնական՝ 25-ը: Միասնական քննություններում ավարտական մասով վերաքննության են մնացել Մուրացանի անվան ավագ դպրոցից՝ մաթեմատիկայից 4 աշակերտ, հայոց լեզվից՝ 1 և 1 աշակերտ կենսաբանությունից (Քարին տակի մ/դ): Հաջողությամբ հանձնել քննությունները և ընդունվել են ԱՐՊՀ առկա բաժիններ 15 աշակերտներ, որից 4-ը՝ անվճար և 2-ը՝ Երևանի Սայաթ-Նովայի անվան պետական կոնսերվատորիա: 1 հոգի ընդունվել է ագրարային համալսարան, 1-ը՝ Գյումրիի համալսարան և 13-ը՝ ԱՐՊՀ հեռակա բաժին: Ընդհանուր առմամբ՝ 32 հոգի, ինչը կազմել է 86%:

Օգոստոսին անց է կացվել ուսուցիչների փաստաթղթային ատեստացիան, որին մասնակցել են 22 ուսուցիչներ:

Ընթացիկ վերանորոգման աշխատանքներ են կատարվել շրջանի գյուղական վայրերի վեց դպրոցներում:

Ընթացքի մեջ է վառելափայտի ձեռքբերման հարցը:

Հաշվետու ժամանակաշրջանում կրթության բաժինը գործուն աջակցություն է ստացել և՛ նախարարությունից, և՛ շրջանի վարչակազմից:

Կարեն ՄԻՐԶՈՅԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Օգոստոսի 31-ին Ասկերանում տեղի ունեցավ ուսուցիչների օգոստոսյան խորհրդակցություն՝ շրջանի հանրակրթական դպրոցների տնօրենների, փոխտնօրենների, առարկայական մասնագետների մասնակցությամբ: Խորհրդակցությանը մասնակցում էին ԿԳ նախարար Սլավա Ասրյանը, փոխնախարար Միքայել Համբարձումյանը, կրթության պետական տեսչության պետ Սոս Արզումանյանը, շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Սամվել Հայրիյանը, շրջանի կրթական հաստատությունների տնօրեններ, ուսուցիչներ: 2012-2013 ուսումնական տարում շրջանի հանրակրթական դպրոցներում կատարված աշխատանքների, ինչպես նաև 2013-2014 ուսումնական տարվա խնդիրների մասին զեկուցումով հանդես եկավ կրթության շրջանային բաժնի վարիչ Շահեն Աղաբաբյանը: Քննարկվեցին շրջանի 32 հանրակրթական դպրոցներում անցած ուսումնական տարում կատարված աշխատանքները, բացթողումները, տրվեցին ցուցումները՝ հետագայում դրանք չկրկնելու համար: Քննարկվեցին խնդիրներ՝ կապված նոր ուսումնականի, դպրոցաշինության, ուսումնական բազայի հարստացման, կադրային հարցի պակասի և այլնի հետ: Հարկ է նշել, որ շրջանի Հովսեփավան և Աստղաշեն գյուղերում ընթացքի մեջ են դպրոցաշինության աշխատանքները: Հովսեփավանում դրանք ավարտին կհասցվեն ընթացիկ ուսումնական տարում, և աշակերտները կտեղափոխվեն նոր՝ առավել հարմարավետ դպրոցական շենք, իսկ Աստղաշենում անելիքներ դեռևս շատ կան:

Ասկերանի շրջանի հանրակրթական դպրոցներում դեռևս լուծված չեն կադրային խնդիրները: Խոսքը սահմանամերձ գյուղերում ուսուցիչների պակասի մասին է: Արդեն արվել են հայտարարություններ թափուր տեղերի համար, սակայն առայսօր դիմողներ չկան: Ինչքան ցավալի, սակայն փաստ է, որ մարդիկ ձգտում չունեն հեռավոր գյուղերում աշխատելու, որի հիմնական պատճառը ժամանակի, ինչպես նաև տրանսպորտի սակավությունն է: Չնայած, դրան զուգահեռ, 100-ից ավելի դիմումատուներ կան աշխատանքով ապահովվելու խնդրանքով:

Խորհրդակցության ժամանակ հանգամանալից ուսումնասիրվել են անցած ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների, ընթացիկ ներքին և արտաքին ստուգումների արդյունքները, մանկավարժական կոլեկտիվներին տրվել համապատասխան հանձնարարականներ: Քննարկման է արժանացել նաև կրթության և գիտության նախարարության տեսչության կողմից շրջանում ստուգված բոլոր դպրոցների այն օղակները, որոնք անբավարար գնահատականի են արժանացել: Շրջանի կրթության բաժնի կողմից կատարվել են կրկնակի ստուգումներ, ինչի արդյունքները գրավոր ներկայացվել են նախարարություն:

Փոխնախարար Մ. Համբարձումյանը խորհրդակցության ժամանակ ներկայացրել է նոր ուսումնականում ծրագրային փոփոխությունները, տվել պարզաբանումներ:

Անցած ուսումնական տարվա ընթացքում կազմակերպված ստուգումների վերլուծությամբ հանդես է եկել տեսչության պետ Ս. Արզումանյանը: Ուսուցիչների օգոստոսյան խորհրդակցությունում ոլորտում սկսված բարեփոխումների շուրջ (ծրագրային փոփոխություններ, նախապատրաստական խմբերի բացման հետ կապված խնդիրներ, մի շարք մասնագիտական և մեթոդական վերլուծություններ) ամփոփիչ խոսքով հանդես եկավ նախարար Սլավա Ասրյանը:

Վերջում խորհրդակցության մասնակիցներն իրենց հուզող հարցերով դիմեցին նախարարին և ստացան լիարժեք պատասխաններ:

Անահիտ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՎԱԾՈՒՄ Է ԲԱՐԲԱՌԸ ՂԱՐԱԲԱՂԻ

Ժայռի նմա՞ն է այս հին բարբառը,
Ժայռի պես կո՛շտ է, չընկրկվա՞ծ,
Ու ժայռի պես էլ կարծր է, համառ է,
Չի՛ պոկի նրան ոչ մի հարված.
Շուրթերի վրա այնպես է բառը,
Ինչպես որ ժա՛յռն է հողում խրված…

Սիլվա ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

Համաշխարհային մշակույթի պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում բառարանագրությունը, որը սերտորեն կապված է լեզուների բառապաշարի հետազոտությամբ զբաղվող բառագիտության հետ:

Բառարանագրությունը ձևավորվել ու զարգացել է գրությանը զուգընթաց: Այն հին պատմություն ունի, ձևավորվել է Միջագետքում՝ շումերների մոտ, դեռևս մ.թ.ա. 3-րդ հազարամյակում: Այն նկատելի նվաճումներ է ունեցել նաև Հին Հունաստանում, Իտալիայում և եվրոպական մյուս երկրներում: 17-րդ դարից սկսած, լայն թափ է ստացել բազմատեսակ բառարանների տպագրությունը:

Հայ բառարանագրությունը ևս առնչվել է մեսրոպյան գրի ստեղծմանը: Մինչև 11-րդ դարը կուտակվել են բառարանային բառաբացատրական հարուստ նյութեր, որոնց հիման վրա 11-15-րդ դարերում գրվել են մի շարք բառարաններ: Սակայն պետք է նշել, որ Հայ բառարանագրությունը զարգացման լայն թափ է ստացել՝ սկսած 18-րդ դարից: Մխիթարյան միաբանության հիմնադիր Մխիթար Սեբաստացին 1749-1769 թթ. հրատարակեց «Բառգիրք Հայկազեան լեզուի» 1-ին և 2-րդ հատորները, որոնցով էլ հիմնադրվեց հայ նոր բառարանագրությունը: Հետագայում հայ իրականության մեջ լույս են տեսել բացատրական, գավառական, արմատական-ստուգաբանական, հոմանիշների, անձնանունների, մասնագիտական, բարբառային, երկլեզվյան կամ թարգմանական ու այլ բառարաններ, որոնք խոշոր ներդրում են ոչ միայն հայ, այլև համաշխարհային բառարանագրության ասպարեզում:

Եվ ահա, սեղանի վրա է բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարար Արմեն Յուրիկի Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարանը», որը ոչ միայն նոր խոսք է հայ լեզվաբանության բնագավառում, այլև ազատ ու անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գիտամշակութային քաղաքականության վառ դրսևորումներից է՝ ի հեճուկս մեր թշնամիների, որոնք չեն դադարեցնում իրենց զեղծարարությունն ու վայնասունը՝ թե իբր Արցախի հայերը եկվորներ են:

Աշխարհին է հայտնի, որ Մեծ Հայքի 10-րդ նահանգը՝ Արցախ-Ղարաբաղը, բազում հազարամյակների ճանապարհ է անցել, ճանաչվել ոչ միայն իր տնտեսական, ռազմական կարողություններով, այլև մշակութային ձեռքբերումներով: Ականավոր գիտնականների ուշադրության կիզակետում է եղել նաև հայոց լեզվի մի առողջ ու բաբախուն երակը կազմող Ղարաբաղի բարբառը: Այս առումով կարևոր եմ համարում ընդգծել, որ Ղարաբաղի բարբառի մասին առաջին հիշատակությունը թողել է 8-րդ դարի քերական Ստեփանոս Սյունեցին: Հետագայում բարբառին անդրադարձել են Ք. Պատկանյանը, Հր. Աճառյանը, Ա. Մեյեն, Ա. Ղարիբյանը, Գ. Ջահուկյանը, Հ. Պետրոսյանը, Ալ. Մարգարյանը, Լ. Հովհաննիսյանը, Ա. Պողոսյանը և ուրիշներ: Առանձնակի արժեք ունի Կ. Դավթյանի «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» աշխատությունը, որտեղ հեղինակը ներկայացրել է տարածքի խոսվածքների հնչյունական և ձևաբանական առանձնահատկությունները: Սակայն բարբառի բառապաշարը պատշաճ մակարդակով ուշադրության չի արժանացել, ինչը խիստ անհրաժեշտ է: Այս գործը մեծ հաջողությամբ լրացրել է Ա. Սարգսյանը իր «Ղարաբաղի բարբառի բառարան» մեծարժեք աշխատությամբ, որը մեծ ներդրում է ինչպես խնդրո առարկա բարբառի ուսումնասիրության, այնպես էլ ընդհանրապես հայ լեզվաբանության մեջ:



Բառարանի կարևոր արժանիքներից է այն, որ հեղինակը, ուսումնասիրելով հարյուրավոր աշխատություններ, ժողովածուներ և տասնյակ հազարավոր բարբառային և բանահյուսական ձեռագիր նյութեր, որոնց մեծ մասը ԼՂՀ գյուղերից հավաքագրել է անձամբ, հնարավորություն է ունեցել ընդգրկելու բարբառում գործածվող գրեթե բոլոր բառերը, ոճերն ու դարձվածները՝ շուրջ քառասուն հազար միավոր՝ հիմնական բառահոդվածներին զուգահեռ ներկայացնելով նաև տարբեր խոսվածքներին հատուկ հնչյունափոխված տարբերակները: Առավել կարևոր է այն հանգամանքը, որ բառարանը կազմված է բարբառային գիտական խիստ տառադարձությամբ:

Աշխատությունն իրականում ոչ միայն բացատրական, այլև ստուգաբանական բառարան է: Գրաբարից ավանդված և փոխառյալ բառերի մոտ հեղինակը նշում է մայր լեզվի ձևը, իսկ եթե փոխատու լեզվում բառը գործածվում է այլ իմաստով՝ նաև իմաստը: Ըստ որում, եթե փոխառությունը միջնորդավորված է, ապա նշվում է ոչ միայն բուն փոխատու, այլև միջնորդ լեզուն: Փաստորեն հեղինակը համադրել է նկարագրական, պատմահամեմատական և լեզվաբանական աշխարհագրության մեթոդները:

Առանձին կարևորություն ունեն բարբառում գործածվող և բառարանում ներկայացված այն բառերը, որոնք իրենց ծագմամբ հնդեվրոպական են, սակայն ավանդված չեն գրաբարում:

Ամենայն մանրամասնությամբ և հստակությամբ են տրված բառերի բացատրությունները: Բուն իմաստներին զուգընթաց, ներկայացված են նաև փոխաբերական իմաստները, առանձին համառոտագրություններով տրվում են լեզվաոճական և քերականական նշումները: Բառահոդվածների վերջում բառի բոլոր իմաստների բացատրությունից հետո ներկայացվում են բարբառի դարձվածներն ու ոճական արտահայտությունները, որոնց թիվը հասնում է շուրջ յոթ հազարի: Ղարաբաղում ընդհանուր տարածում ունեցող դարձվածներից բացի, բերվում են նաև տեղական նշանակության՝ կոնկրետ որևէ գյուղում կամ ենթաշրջանում գործածվող դարձվածները: Բոլոր բառերի, դարձվածների և ոճերի նշանակությունները պարզաբանելու և հիմնավորելու համար իմաստների բացատրությունից հետո տպագիր, ձեռագիր և բանավոր աղբյուրներից բերվում են վկայված օրինակներ՝ նախադասություններով, երբեմն՝ բառակապակցություններով՝ վերջում համառոտագրությամբ նշվելով համապատասխան աղբյուրը, ժողովածուի վերնագիրը և էջը:

Այս ամենը հիմք է տալիս ասելու, որ հեղինակն ստեղծել է հայ բարբառագիտության պատմության մեջ նախադեպը չունեցող մի բարձրարժեք աշխատություն, որի նշանակությունն անչափ մեծ է ինչպես Ղարաբաղի ու հայերենի մյուս բարբառների, այնպես էլ հայոց լեզվի պատմության ուսումնասիրության համար:

Հարկ եմ համարում նշել նաև, որ սկսած 1996 թվականից, ականատես եմ եղել Ա. Սարգսյանի՝ բառարանի քարտագրման և կազմման տքնաջան աշխատանքին, ինչպես նաև քաջածանոթ եմ նրա բանահավաքչական գործունեությանը և Ղարաբաղի բարբառին ու բանահյուսությանը նվիրված տասնյակ գիտական աշխատություններին, ժողովածուներին ու հոդվածներին:

Գիտական աշխարհում ջերմորեն են ընդունվել նրա «Արցախյան հանելուկներ» (2002), «Արցախյան ավանդություններ» (2007), «Շատախի ենթաբարբառը Հադրութի ենթաբարբառի միջավայրում» (2009), «Արցախի բանաձևային բանահյուսությունը» (2011), «Արցախյան առակներ» (2011) արժեքավոր ուսումնասիրությունները և ժողովածուները, ինչպես նաև միջազգային և հանրապետական գիտաժողովներում կարդացած տասնյակ զեկուցումները՝ լեզվաբանության կարևոր հիմնախնդիրների շուրջ:

Արմեն Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարանը» բացառիկ աշխատություն է և արժանի է ամենայն խրախուսանքի: Ուստի ոչ միայն իմ, այլև մեր բոլոր գործընկերների անունից սրտանց շնորհավորում եմ նրան՝ գիտական նոր խիզախումների ակնկալիքով:

Սոկրատ ԽԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ

Շնորհավորանք

ՄԵԿԸ՝ ՆՎԻՐՅԱԼՆԵՐԻՑ

Մանկավարժությունը մասնագիտություն լինելով հանդերձ, նախ և առաջ, վեհ կոչում է, հոգու անմնացորդ նվիրում հայրենի բնօրրանի խաղաղ ու բարգավաճ ապագա կերտելու ազգանպաստ գործին: Ահա այսպես կարելի է բնութագրել Անահիտ Մելքումյան մարդուն և մանկավարժին, ով ծնվելով ու դաստիարակվելով մանկավարժ մոր՝ Ժաննա Պետրոսյանի խիստ ու պահանջկոտ, բայց նաև անչափ բարի ու հոգատար հայացքի ներքո, սիրեց ու ընտրեց այդ վեհ ու ազնիվ մասնագիտությունը և անմնացորդ նվիրվեց մեսրոպյան ոսկեդենիկ այբուբենի անմահացման գործին:

Այսօր Ա. Մելքումյանը 50 տարեկան է: Ավարտելով Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը՝ զինվորագրվեց Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հ.2 դպրոցի կուռ բանակի նվիրյալների շարքին: Արցախյան պատերազմի դառը կսկիծից շանթահար, անդառնալի կորստի ցավից հոգին խարանված՝ շարունակեց իր հայրենանվեր գործը և թշնամու արկերի ոռնոցի դիմաց հայ մանուկի շուրթերից հնչեցված «Այբ»-ը դարձրեց հայկյան նետ, որ պիտի մխրճվեր թշնամու կուրծքը: Եվ արդեն շուրջ 27 տարի է՝ բազմաթիվ հայ մանուկների գրկաբաց ընդունում է հայոց կրթօջախում, նրանց հոգիներում վառելով անմար ջահ, որ պիտի դառնան հայրենիքի ապագան լուսավորող վառ կանթեղներ: Սիրելի դասվարը իր հոգու լույսն ու ջերմությունը միահյուսել է գրին ու գիտելիքին և արևի նուրբ շողիկի նման թափանցելով սանիկների հոգու խորքը՝ սերմանում է վեհ ու գեղեցիկ գաղափարներ, գեղագիտական ճաշակ, ճկուն մտածողություն և խոր տրամաբանություն:

Խորությամբ տիրապետելով իր մասնագիտությանը և հետևողականորեն զբաղվելով ինքնակրթությամբ՝ նա բազմիցս ուսումնասիրել և փորձարկել է ժամանակակից մեթոդները, բարձրաձայնել դրանց առավելության և անհրաժեշտության մասին: Այսօր նա ժամանակակից բարեփոխվող դպրոցի դրոշակակիր է:

Ա. Մելքումյանը բազմաթիվ բաց և ընդօրինակման դասերի հեղինակ է, որոնք սկսնակ ուսուցիչների համար դառնում են ուղեցույց: Նրա աշխատանքային փորձը ներկայացվել է տարածման:

Ա. Մելքումյանը տարիներ ի վեր աշխատելով փոխտնօրենի պաշտոնում, ստանձնած գործին նվիրվել է անմնացորդ ու անաչառ կատարել իրեն վստահված պարտականությունները: Նրա կազմակերպած դասարանական և արտադասարանական միջոցառումներն ունեն յուրօրինակ ու ինքնատիպ ոճ: Նա չի սիրում ինքն իրեն կրկնել և ամեն անգամ ունկնդրին զարմացնում է նոր բացահայտումներով: Եվ միշտ պատրաստակամությամբ ու սիրով օգնության ձեռք է մեկնում երիտասարդ ուսուցիչներին՝ խրախուսում, դառնում բարի ու սրտակից ընկեր և խորհրդատու:

Այսօր ամբողջ կոլեկտիվով ասում ենք՝ շնորհավոր ծնունդդ, սիրելի գործընկերուհի: Թող քո եռանդն ու ավյունը միշտ ծաղկուն լինի, քանզի ասելիք ու բարի գործեր դեռ շատ ունես սաներիդ, երկու որդիներիդ, սիրելի թոռնիկներիդ համար իրականացնելու:

Ստեփանակերտի Ա. Ղուլյանի
անվան հ. 2 հիմնական
դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

Շնորհավորանք

Իսկական ուսուցչի կերպարի դրոշմը փոխանցվում է սաներին, նրանց համար դառնում սրբազան լուսապսակով երիզված իդեալ ու պաշտամունք: Ասում են՝ մանկավարժի մասնագիտությունը վերուստ տրված շնորհ է, որը հմուտ ուսուցիչը պետք է անմնացորդ ծառայեցնի ժողովրդին:

Իր այդ պարտականությունները վարպետորեն է կատարում Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան հ. 8 ավագ դպրոցի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Թերեզա Ղարախանյանը:

1985թ. ոտք դնելով հ. 8 դպրոց՝ նա ստացավ իր մանկավարժական մկրտությունը և մինչև այսօր էլ զբաղված է մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործով: Նրա ամենազորեղ զենքն իր իմացությունն է, բարոյական անբասիր դիմագիծը, հասարակական կյանքում ունեցած իր կշիռն ու հեղինակությունը: Իմաստուն ուսուցչի սրտում անթեղված կրակներ կան, որոնք շարունակ բոցավառվում են, և նա մասնիկ առ մասնիկ նվիրաբերում է իր սաներին, ջերմացնում ու լուսավորում նրանց ճանապարհը:

Թ. Ղարախանյանի ստեղծագործական ամեն մի աշխատանք արգասաբեր է, քանզի տարիներ շարունակ նրա աշակերտները առարկայական օլիմպիադաներում ու ստեղծագործական շարադրությունների մրցույթներում առաջնակարգ տեղեր են գրավում՝ բարձր պահելով դպրոցի պատիվը:

Ծննդյան 50-ամյա հոբելյանի կապակցությամբ Ա. Սախարովի անվան հ. 8 ավագ դպրոցի ուսուցչական և աշակերտական կոլեկտիվները շնորհավորում են Թերեզա Ղարախանյանին ու մաղթում բազում հաջողություններ աշխատանքում և անձնական կյանքում:

Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան
հ. 8 ավագ դպրոցի մանկավարժական
կոլեկտիվ

ԴՊՐՈՑԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Մեր երեխաները մեր ծերությունն են: Ճիշտ դաստիարակությունը մեր երջանիկ ծերությունն է, վատ դաստիարակությունը՝ մեր ապագա վիշտը, մեր արտասուքները, դա մեր հանցանքն է մյուս մարդկանց առջև, հասարակության առջև, ամբողջ երկրի առջև»:

Ա.Ս. Մակարենկո

Տարիներ շարունակ իմ դասղեկական աշխատանքը սկսել եմ միջին տարիքից (4-5-րդ դասարաններ), այսինքն՝ դեռահասության շրջանից: Որքա՜ն հուզումնալից պահեր են ապրում մայրն ու ուսուցիչները դեռահասների պատճառով, որքա՜ն գրքեր են գրվել դեռահասի խորհրդավոր ներաշխարհի մասին: Այո, այն մեզ թվում է խորհրդավոր ու անհասկանալի: Ինչևէ: Ցանկանում եմ պարզել, թե ինչից եմ սկսում իմ աշխատանքը դեռահասների հետ:

Նոր դասարան ընդունելիս իմ առաջին խնդիրն է լինում ծանոթանալ աշակերտների հետ, հետո՝ ծնողների: Վերջիններիս հետ զրուցելու միջոցով նորանոր տվյալներ եմ իմանում երեխաների բնավորության, հակումների ու նախասիրությունների մասին: Ծանոթանում եմ աշակերտների ընտանեկան պայմաններին: Այս ամենից հետո արդեն մտովի առանձնացնում եմ աշխույժ ու չարաճճի, հանգիստ կամ ինքնամփոփ երեխաներին, մշակում նրանց հետ տարվելիք անհատական ու կոլեկտիվ աշխատանքի միջոցառումներ:

Հերթական դասարանական կոլեկտիվներից մեկում բացահայտեցի, որ մի քանի տղաներ դաստիարակվում են բռունցքով: Հրավիրեցի ծնողական ժողով միայն հայրերի համար և նրանց հետ կազմակերպեցի զրույց «Դեռահասը և նրա ընտանեկան դաստիարակությունը» թեմայով: Քննարկեցինք Սուխոմլինսկու «Քաղաքացու ծնունդը» գրքից հետևյալ հատվածը. «Դեռահասը, պատկերավոր ասած, մի ծաղիկ է, որի գեղեցկությունը կախված է նրա նկատմամբ տարվող խնամքից: Ծաղկի նկատմամբ հոգատարությունը պետք է սկսել նրա ծաղկելուց շատ առաջ: Այլապես պատանեկության ճակատագրական անխուսափելի երևույթների առջև շփոթմունքը նման է այն այգեպանի շփոթվածությանը, որը սերմ է գցում հողի մեջ, բայց հաստատ չգիտի, թե այդ ինչ սերմ է՝ վարդի՞, թե՞ տատասկի: Տարիներ անց նա գալիս է հիանալու ծաղկով, սակայն փուշ է տեսնում: Եվ մի՞թե մարդկային կյանքում նման բաներ չեն լինում: Մի՞թե զայրույթ չի պատճառում այն, որ հազարավոր այդպիսի այգեպաններ, այսինքն՝ ծնողներ, կյանք տալով երեխային, դրանով իրենց առաքելությունը համարում են ավարտված, իսկ թե իրենց երեխայից ինչ կստացվի, այդ մասին թող հոգա ու մտածի ուսուցիչը:

Չէի ասի, թե այս միջոցառումը միանգամից հարթեց բոլոր խոչընդոտները, իսկ ես հասա նպատակիս: Բայց որ այն որոշ ազդեցություն ունեցավ ծնողների վրա, կասկածից դուրս է: Եղան ծնողներ, որ խոստովանեցին՝ իրենք դաստիարակության ճիշտ միջոց չեն ընտրել: Երեխաների դաստիարակության լավագույն միջոց է դասղեկի ժամը: Ամեն ինչ անում են, որպեսզի դասղեկի ժամերը ծառայեն աշակերտների դաստիարակությանը, լինեն քաղաքացիականության, բարոյական նորմերի, կուլտուրական վարվելակերպի դաստիարակման միջոց: Դրա համար աշակերտներն ունեն «Օգտակար խորհուրդների և ոսկի խոսքերի» ծոցատետրեր, որտեղ գրի են առնում բարոյական չափանիշները: Ահա դրանցից մի քանիսը.

1. Դուք ապրում եք մարդկանց շրջապատում, հասարակության մի անբաժանելի մասնիկն եք: Ուրեմն՝ ձեր ամեն մի արարք, ամեն ցանկություն անդրադառնում է մարդկանց վրա: Ստուգեք ձեր արարքներն այն գիտակցությամբ, թե այդ արարքներով, արդյոք, տհաճություն ու անհարմարություն չե՞ք պատճառում մարդկանց: Ուրեմն՝ այնպես արեք, որ ձեր շրջապատի մարդիկ իրենց լավ զգան:

2. Դուք օգտվում եք բարիքներից, որոնք ստեղծել են մարդիկ՝ լուսավոր դասասենյակներ, լաբորատոր սարքեր ու համակարգիչներ, մարզադահլիճ ու դպրոցամերձ հողամաս՝ բարեբեր ծառերով: Կարողացեք վարձահատույց լինել դրանց համար: Դա հատուցեք բարությամբ:

3. Բոլոր բարիքներն ու կյանքի ուրախությունները ստեղծվում են աշխատանքով և միայն աշխատանքով: Ուսումը ձեր առաջին աշխատանքն է: Դպրոց գալով, դուք աշխատանքի եք գալիս:

4. Եղեք բարի և զգայուն մարդկանց նկատմամբ, օգնեցեք թույլերին և անօգնականներին: Մարդկանց չարիք մի՛ պատճառեք, օգնեցեք ընկերոջը դժբախտության մեջ: Հարգեք ու պաշտեք ձեր ծնողներին. նրանք կյանք են տվել ձեզ, դաստիարակում են ձեզ, ուզում են, որ դուք դառնաք Արցախ աշխարհին արժանի քաղաքացիներ:

Ահա թե ինչու «դպրոց», «ընտանիք», «հասարակություն» հասկացություններն անբաժանելիորեն կապված են իրար հետ: Եթե ուսուցման մեջ գլխավոր դերն ուսուցչինն է, ապա դաստիարակության գործում՝ նաև ծնողինը և հասարակությանը: Երեխայի մտքի աչքերը բացվում են ընտանիքում, որտեղից սկիզբ է առնում նոր մարդու կյանքի ճանապարհը, մշակվում են նրա համոզմունքները, բարոյական կերպարը: Հենց ընտանիքում է առաջ գալիս այն հարցը, թե ծնողն ինչպես է հասկանում և կիրառում դաստիարակության ձևերն ու մեթոդները:

Դպրոց-ընտանիք-հասարակություն. ահա այն երեք բաղադրամասերը, որոնք համալրում են իրար և ճիշտ զուգակցելու դեպքում տալիս գոհացուցիչ արդյունք աճող սերնդի դաստիարակության գործում: Այս օրերին ծնողների առաջնահերթ խնդիրն է երեխայի արարքներին՝ լավ թե վատ, տալ ճիշտ գնահատական: Ինչպե՞ս կարելի է աչք փակել այնպիսի հատկանիշների հանդեպ, ինչպիսիք են համառությունը, անհնազանդությունը, ամբարտավանությունը, անհարգալից վերաբերմունքը մեծի ու փոքրի նկատմամբ, ոչ ճիշտ պահվածքը հասարակության մեջ: Իսկ այս ամենն ունենում է անկանխատեսելի, երբեմն նաև կորստաբեր հետևանքներ: Արդյունքում ունենում ենք անհանգանդ անչափահասներ, ովքեր ծխում են, զբաղվում թղթախաղով, հաճախակի բացակայում դասերից, դառնում անկառավարելի: Իսկ այս ամենը լավ բան չի խոստանում ոչ հասարակությանը, որի մի անդամն է անչափահասը, ոչ ընտանիքին, որի հայելին է նա, ոչ էլ այն կրթօջախին, որտեղ նա ուսանում է: Ավելացնեմ նաև, որ նման հանգամանքներում նսեմանում է տվյալ կրթօջախի հեղինակությունը: Չէ՞ որ մատաղ սերնդի դաստիարակության բարդ ու պատասխանատու գործում դպրոցի, ընտանիքի և հասարակության ջանքերը համախմբելու ուղղությամբ առանձնապես մեծ դեր ունի դպրոցը:

Մեր օրերում, ցավոք, ազնիվ և ճշմարտասեր մարդիկ քիչ են մնացել, ովքեր խոսքով ու գործով, կրքոտությամբ մասնակցում են հասարակական կյանքի վերափոխմանը, ում խոսքն ու գործը միասնական են: Բայց մենք հուսահատվել չգիտենք, մեր ուսերի վրա վերցնելով սերնդի դաստիարակության և կրթության ծանր բեռը, քայլում ենք առաջ, քայլում հպարտ ու աննահանջ: Ուրախությամբ եմ փաստում՝ 33 տարվա մանկավարժական իմ գործունեության ընթացքում չեմ ունեցել ոչ դժվար դաստիարակվող աշակերտ, ոչ էլ անտարբեր ծնող: Միշտ այն համոզմունքին եմ եղել, որ դպրոցից է սկսվում այն ճանապարհը, որը տանում է մեծ կյանք, բացում աշխատանքային խիզախումների, հայրենանվեր արարումների նոր ասպարեզ: Դպրոցի, ուսուցչի արդյունավետ աշխատանքով են պայմանավորված այդ ճանապարհի լուսավորվածությունն ու անխոտոր ընթացքը:

Ճշմարտության դեմ մեղանչած կլինեմ, եթե չշեշտեմ, որ այսօր ազգովի վայելում ենք ուսուցչի տքնաջան, անդուլ աշխատանքի պտուղների համն ու հոտը: Մենք միշտ ակնածանքով խոնարհվում ենք Արցախյան գոյամարտում նահատակվածների սուրբ շիրիմների առջև, հիշում նրանց աչքերի գույնը, խառնվածքը, նախասիրությունները: Հիշում ենք նրանց պատմած դասերը, գրած շարադրությունները, կատարած խեթությունները... Այդ նրանք՝ մեր սաներն են, որ այսօր քայլում են հենակներով ու համեստաբար լռում են իրենց կատարած սխրանքների մասին: Այդ նրանք՝ մեր քաջազուն տղաներն են, որ քուն թե արթուն հսկում են մեր հայրենիքի սահմանները, որպեսզի դպրոցական զանգը կրկին դասի կանչի աշակերտներին, ու շարունակվեն հայրենասիրության դասերը...

Նվարդ ԲԱՂՐՅԱՆ
Ասկերանի շրջանի Ավետարանոցի միջն. դպրոցի հ. լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

Շնորհավորանք

ՍՐՏԻ ԽՈՍՔ



Կան անհատներ, որոնց մասին խոսելիս հպարտության զգացում ես ունենում, և սովորական բառերն այլևս անզոր են դառնում ն կ ա ր ա գ ր ե լ ու նրանց: Առանց երկմտելու կասեմ, որ Հրաչիկ Արզանյանը հենց այդ անհատներից է: Օժտված է բացառիկ տաղանդով ու ձիրքով, մարդկանց ներաշխարհը թափանցելու մեծ կարողությամբ: Խստապահանջ է, ունի մասնագիտական խորը պատրաստվածություն, սկզբունքայնություն, հետևողականություն, պատասխանատվության խոր զգացում և բարձր ինտելեկտ:

Երբեմն զարմանում ես, թե գյուղական հակասական միջավայրում ինչպես է կարողացել իր բարձունքին պահել ուսուցչի վեհ կերպարը: Թե՛ Ասկերանի շրջանում և թե՛ շրջանից դուրս նրան գիտեն որպես հարգված, իր մասնագիտությանը գերազանց տիրապետող ուսուցչի: Մեծ թե փոքր, հպարտանում են, որ երբևէ աշակերտել են նրան, առնչվել ինչ-ինչ առիթներով:

Ոչ միայն կատարյալ ուսուցիչ է, այլ նաև լավ անձնավորություն, ծնողի համար լավ զավակ, օրինակելի ամուսին, ընտանիքին նվիրված հայր:

Վարպետ-մանկավարժն օգտագործում է զանազան մեթոդներ ու հնարներ՝ աշակերտներին թվերի հրաշագործ աշխարհով հրապուրելու համար, պարզ ու մատչելի է դարձնում ամենադժվար նյութը՝ աշակերտների մոտ ձևավորելով վստահություն սեփական ուժերի նկատմամբ: Հ. Արզանյանը սովորեցնում է ոչ միայն թվերի լեզվով, այլև ճիշտ ապրելու, իսկական մարդ դառնալու արվեստը:

Արիստոտելյան այն միտքը, թե երեխաներին դաստիարակող ուսուցիչը հարգանքի է արժանի ավելի, քան ծնողը, հենց նրա նմանների համար է ասված:

Հաճախ եմ հիշում իմ դպրոցական տարիները: Միշտ անհամբերությամբ էինք սպասում նրա դասերին, ուրախանում նրա դիպուկ բնորոշումներով: Այդ տարիներին ընկեր Արզանյանը երիտասարդ էր, եռանդուն: Իսկ տարիներ անց, երբ տեսնում եմ, թե ինչպես են աշակերտները նույն սիրով ու հպարտությամբ պատրաստվում նրա դասերին, կրկին համոզվում եմ, որ նա, իրոք, արժանի է ուսուցչի բարձր կոչմանը:

Հետաքրքիր և իմաստալից կենսուղի է անցել ընկեր Արզանյանը:

Ծնվել է 1953թ. օգոստոսի 20-ին, Ասկերանի շրջանի Ավետարանոց գյուղում: Գյուղի միջնակարգը գերազանց գնահատականներով ավարտելուց հետո ընդունվել է Գորիսի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի բաժինը, որը ևս ավարտել է գերազանց: Այնուհետև դասախոսական կազմի առաջարկով նա աշխատանքի է անցել ինստիտուտում՝ որպես կրտսեր դասախոս: Երկու տարի դասախոսելուց հետո ծառայության է անցել խորհրդային բանակի շարքերում:

1976-ից առայսօր ընկեր Արզանյանն աշխատում է հայրենի գյուղի դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: Զբաղեցրել է տարբեր պաշտոններ՝ գյուղական խորհրդի նախագահ, դպրոցի տնօրեն, բայց մանկավարժի բարձր կոչումը վեր է դասել ցանկացած պաշտոնից ու գերադասել է լինել շարքային ուսուցիչ: Արցախյան ազատամարտի ոգեշնչողներից էր: Իսկական հայրենասեր էր ու ազգապաշտ: Պատերազմական տարիներին մանկավարժությանը զուգընթաց՝ ղեկավարում էր գյուղը: Փխրուն սիրտ ուներ, խորը ցավ էր ապրում՝ տեսնելով յուրաքանչյուր ազատամարտիկի կորուստ: Պարգևատրվել է «Արիության համար», «Երախտագիտություն» մեդալներով, պատվոգրերով ու գովասանագրերով:

Ձեր բոլոր սաների, դպրոցական ողջ կոլեկտիվի անունից շնորհավորում ենք Ձեր ծննդյան 60-ամյակը, հարգարժան ուսուցիչ, մաղթում առողջություն, ղարաբաղյան երկարակեցություն ու անձնական երջանկություն:

Ալինա ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ավետարանոցի միջն. դպրոցի հ. լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

Շնորհավորանք

ՕԺՏՎԱԾ ՄԵԾԱԳՈՒՅՆ ԱՐԺԱՆԻՔՆԵՐՈՎ

Լրացավ մեր սիրելի ուսուցչուհու՝ Հասմիկ Մկրտումյանի ծննդյան 50 տարին: Անհատ, ով իր կյանքի բեղուն ու գիտակից տարիները նվիրաբերել է ուսուցչի վեհ առաքելությանը:

Ծնվել է 1963թ. օգոստոսի 9-ին, Ստեփանակերտ քաղաքում: 1970-1980 թթ. սովորել է տեղի հ. 2 միջնակարգ դպրոցում:

1986-ին ավարտելով Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը՝ երիտասարդ ու ավյունով լի մասնագետը սկսեց աշխատել ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղում՝ որպես պատմության ուսուցչուհի: Եվ առայսօր նույն եռանդով ու նվիրվածությամբ աշխատում է իր համար երկրորդ տուն, հոգեհարազատ օջախ դարձած այդ կրթահամալիրում:

Հասմիկ Մկրտումյանը մեծագույն արժանիքներով անհատականություն է՝ օժտված պարտքի ու պատասխանատվության մեծ զգացումով, մարդկային վեհ ու վսեմ որակներով: Նա հավատարմորեն նվիրված է մանկավարժի իր գործին, ուսուցչի վեհ կոչմանը:

Անթերի տիրապետելով իր առարկային՝ Հ. Մկրտումյանը մտովի թափանցում է հայ ժողովրդի պատմության էջերը և հույզերով ու ոգևորությամբ համեմված՝ հայրենասիրություն ներարկում աշակերտներին:

Աշակերտն ու դպրոցը նրա կենսակերպն են: Իր սաներին նա դաստիարակում է ազգասիրության, ընկերասիրության ոգով ու գիտելիքներ ամբարելու ձգտումով: Ահա ինչու բազում շրջանավարտներ երախտագիտությամբ են հիշում իրենց սիրելի ուսուցչին, մեծարանքով խոսում նրա մասին:

Նա ոչ միայն լավագույն մանկավարժ է, այլև հավատարիմ ընկեր, լավ հոգեբան, սիրված կին ու հոգատար մայր:

Սիրելի Հասմիկ Մկրտումյան, շնորհավոր Ձեր հոբելյանը: Մաղթում ենք քաջառողջություն, երջանիկ կյանք ու հաջողություններ աշխատանքում:

ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի մանկավարժական կոլեկտիվ

«ԱՐԾՎԱԲԵՐԴԻ» ԵՐԿՐՈՐԴ ԾՆՈՒՆԴԸ՝ ՆՎԵՐ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ

Վերջապես իրականացավ կոմպոզիտոր Անդրեյ Բաբաևի ամենանվիրական երազանքը՝ «Արծվաբերդ» օպերան հնչեցնել իր հայրենի Արցախի հողում: Սեպտեմբերի 1-ին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 22-րդ տարեդարձի նախօրեին Շուշիի ռեալական ուսումնարանի կիսավեր շենքի բակում կայացավ օպերայի բացօթյա բեմադրությունը: Երևի թե հաղթանակից հետո քաղաքն այդքան բազմամարդ չէր եղել, ինչպես այդ օրը: Նախապես մաքրված և բարեկարգված շենքի հարակից տարածքը ներկայացումից ժամ առաջ արդեն լեփ-լեցուն էր հանդիսատեսներով, նստատեղերի քանակը երևի որոշված էր ըստ հրավիրատոմսերի, մինչդեռ մարդկային հոսքը չէր դադարում: Եվ հատկանշական է, որ ո՛չ երեկոյան Շուշիի սառը քամին, ո՛չ նստարանների սակավությունը չխանգարեցին հանդիսականների մի մասին ամբողջ երկու ժամ հոտնկայս վայելելու այն գերագույն հաճույքը, որ պարգևեց կոմպոզիտորի հրաշալի և եթերային երաժշտությունը:

Արցախի մշակութային կյանքում հիրավի իրադարձություն էր այս բեմադրությունը, որը նվիրված էր ԼՂՀ Անկախության օրվան և վերածվեց իսկական տոնախմբության: Օպերայի արցախյան առաջնախաղը կայացավ ՀՀ Նախագահի տիկին Ռիտա Սարգսյանի բարձր հովանու ներքո և ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության աջակցությամբ: Ներկա էին Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ԼՂՀ ԱԺ խոսնակ Աշոտ Ղուլյանը, վարչապետ Արա Հարությունյանը, Արցախի և Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյաներ, ներկայացուցիչներ Սփյուռքից և հյուրեր արտերկրից: Ռիտա Սարգսյանի համոզմամբ՝ «այս նախաձեռնությունը նոր խթան կհանդիսանա՝ բարձրացնելու Արցախի արվեստասեր ժողովրդի անսասան ու անվեհեր ոգին»: Նա վստահ է, որ օպերայի բեմադրությունն այստեղ մեծ դեր կունենա երաժշտարվեստի հետագա զարգացման գործում և անջնջելի հետք կթողնի տեղի հանդիսատեսի հոգում:

Նախագծի կազմակերպիչներն են՝ նախագծի գեղարվեստական ղեկավար՝ Սարինե Ավթանդիլյան, դիրիժոր՝ Էդուարդ Թոփչյան, երաժշտական խորհրդատու՝ Յուրի Դավթյան, բեմադրող ռեժիսոր՝ Ժիրայր Դադասյան, բեմադրող նկարիչ՝ Աստղիկ Ստեփանյան և բեմադրիչ խորեոգրաֆ Արա Ասատուրյան: Նշենք, որ նախագծին մասնակցում էին Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբը (գեղ. ղեկավար և գլխ. դիրիժոր՝ Էդուարդ Թոփչյան), Հայաստանի «Սպեղանի» երգչախումբը (գեղ. ղեկավար և խմբավար՝ Սարինե Ավթանդիլյան), Հայաստանի պետական «Հովեր» կամերային երգչախումբը (գեղ. ղեկավար և խմբավար՝ Սոնա Հովհաննիսյան), Արցախի պետական երգչախումբը (գեղ. ղեկավար և խմբավար՝ Նինա Գրիգորյան), Արցախի «Մռակած» պետական կամերային երգչախումբը (գեղ. ղեկավար և խմբավար՝ Մարինե Մեսրոպյան), Արցախի պարի պետական համույթը (գեղ. ղեկավար՝ Աշոտ Բաբայան), Երևանի մնջախաղի պետական թատրոնը (գեղ. ղեկավար՝ Ժիրայր Դադասյան), օպերային մենեղրգիչներ՝ բարիտոն Գուրգեն Բավեյանը (Արծվաբերդի մելիք Ռուբեն), սոպրանո Իրինա Զաքյանը (Մարո), տենոր Հովհաննես Այվազյանը (Կարո), բաս Հովհաննես Ներսեսյանը (Թորոս), բաս Հայկ Տիգրանյանը (Ավո), մեցո սոպրանո Նարինե Անանիկյանը (Շուշան), Պերճ Քարազյանը, Կարեն Մկրտչյանը, Կիմ Սարգսյանը, Նանար Շահրամանյանը և Հովհաննես Անդրեասյանը:

Կոմպոզիտոր Անդրեյ Բաբաևը ծնվել է 1923թ. Արցախի Մարտունու շրջանի Մսմնա գյուղում: 10 տարեկան հասակում ընդունվել է Բաքվի երաժշտական ուսումնարանի թառի դասարան, որն ավարտելուց հետո ընդունվել է նույն ուսումնարանի կոմպոզիցիայի բաժին: Նկատելով պատանի երաժշտի բացարձակ ընդունակությունները, կատարողական և ստեղծագործական մեծ հաջողությունները՝ մեկ տարի անց նրան հրավիրում են ուսանելու Բաքվի կոնսերվատորիայում: 1941-1945-ին մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Այդ տարիներին գրել է խորհրդային ժողովրդի խիզախությունն ու հերոսական ոգին գովերգող բազմաթիվ երգեր: Զորացրվելուց հետո ուսումը շարունակել է Մոսկվայի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի բաժնում՝ Յուրի Շապորինի դասարանում: Գրել է «Երիտասարդություն» սիմֆոնիկ նախերգանքը, Դաշնամուրային տրիո, Դաշնամուրի կոնցերտ ժողովրդական գործիքների նվագախմբի նվագակցությամբ, Լա մինոր սիմֆոնիան՝ նվիրված նավթագործներին, ստեղծագործություններ էստրադային և ժողովրդական գործիքների նվագախմբերի համար, բազմաթիվ երգեր, երաժշտություն դրամատիկական ներկայացումների և կինոնկարների համար: Կոմպոզիտորը մշակել է հայկական, տաջիկական, թուրքմենական, հնդկական, վիետնամական և այլ ժողովուրդների մեղեդիներ: Անդրեյ Բաբաևի առավել նշանավոր ստեղծագործությունը «Արծվաբերդ» օպերան է՝ գրված 1957 թվականին (լիբրետո՝ Գուրգեն Բորյանի և Զավեն Վարդանյանի), որը նույն տարվա նոյեմբերին բեմադրվել է Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում: Տարիներ շարունակ այն մնացել է թատրոնի խաղացանկում: Մեղեդային հարստությունը, նուրբ քնարականությամբ ու խոր հուզականությամբ հագեցած ազգային ինքնատիպ երաժշտությունը և օպերային դրամատուրգիայի կանոնների լավ իմացությունը արժանի հաջողություն բերեցին «Արծվաբերդին»: Նախերգով և չորս գործողությամբ քնարական-դրամատիկական օպերան 34-ամյա կոմպոզիտորի և հայկական օպերային արվեստի մեծագույն նվաճումներից մեկն է: Հատկանշական է, որ այն ներկայացվել է Սվերդլովսկում, Դոնեցկում, Մոսկվայում՝ կենտրոնական հեռուստատեսությամբ, Կազանում: Բաբաևի երկրորդ օպերան՝ «Պաղտասար աղբարը», մնաց անավարտ՝ կոմպոզիտորի հանկարծական և առեղծվածային մահվան պատճառով: Անդրեյ Բաբաևը ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ է, մահացել է Մոսկվայում՝ 1964 թվականին:

«Արծվաբերդ» օպերայի ստեղծման ու բեմադրության հարցում շատ կարևոր դեր է ունեցել հայկական օպերային արվեստի մեծ վարպետ, դիրիժոր Միքայել Թավրիզյանը: Առաջին ներկայացման դիրիժորը՝ երիտասարդ, տաղանդավոր երաժիշտ Յուրի Դավթյանը, աշխատելով Թավրիզյանի անմիջական ղեկավարությամբ, կարողացել է վերհանել օպերայի գեղարվեստական արժանիքները: Լինելով կոմպոզիտորի մոտ ընկերը և «Արծվաբերդի» առաջին դիրիժորը՝ ՀՀ ժողովրդական արտիստ Յուրի Դավթյանը նույնպես ներկա էր արցախյան պրեմիերային և այն համարեց մշակութային մեծ իրադարձություն. «Այս բեմադրության մեջ լիբրետոյի դրամատիկ ուրվագծերը պահպանվել են, բայց որոշ գաղափարախոսական, ստիպողական կողմեր, որոնք տուրք էին 50-ական թվականներին, բոլորը հանվեց, և դրանից օպերան միայն շահեց»: Նրա մեծագույն ցանկությունն է, որ օպերան նորից իր տեղը զբաղեցնի Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի խաղացանկում:

«Արծվաբերդի» սյուժեն արտացոլում է սիրո մի պատմություն, որտեղ երևում է բարի և չար ուժերի մշտնջենական պայքարը: Այդ պայքարում մի կողմից բացահայտվում է դրական հերոսների հայրենանվեր էությունն ու ոգու խիզախությունը, մյուս կողմից՝ թշնամիների չարությունն ու անխուսափելի կործանումը, ժողովրդի հաղթանակը նոր կյանքի ճանապարհին:

☞12

Շնորհավորանք

ԱՆԿՈՏՐՈՒՄ ԿԱՄՔՈՎ

Լավ մայր, սրտացավ ընկեր, բարեհամբույր անձնավորություն: Այսպես կարելի է բնորոշել Վեներա Գրիգորյանին, ով ջանք ու եռանդ չի խնայում մատաղ սերնդի մեջ գրքի հանդեպ սեր ու կապվածություն ստեղծելու գործում:

Ծնվել է Մարտունու շրջանի Նռնգի գյուղում՝ հայտնի մանկավարժ Հենրիխ Գրիգորյանի ընտանիքում: Հաճախել է Ստեփանակերտի հ. 7 միջնակարգ դպրոցը, որն ավարտել է 1979 թվականին: 1979-1983թթ. սովորել և ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի «Տարրական դասարաններում դասավանդման մեթոդիկա և հոգեբանություն» բաժինը: 1983թ. աշխատանքի է անցել Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան հ. 1 դպրոցում, նախ՝ որպես ջոկատավար, ապա՝ դասվար:

1992 թվականից առայսօր աշխատում է Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցում, սկզբում՝ որպես դասվար, հետո՝ գրադարանի վարիչ:

Դառը ճակատագիրը չի կարողացել կոտրել Վ. Գրիգորյանի անկոտրում կամքը, հավատն ու սերը կյանքի հանդեպ: Վաղ հասակում զրկվել է մորից, իսկ Արցախյան ազատամարտի տարիներին կորցրել է միևնույն եղբորը՝ Լորիս Գրիգորյանին: Ծնված և մեծացած լինելով մտավորականի ընտանիքում, գիտի գրքի հարգը և համոզված է, որ գրքի միջոցով կարելի է աշակերտների մեջ սերմանել մարդկային վեհ հատկանիշներ՝ հայրենասիրություն, աշխատասիրություն, բարություն, նվիրվածություն:

Վեներա Գրիգորյանի նախաձեռնությամբ դպրոցում լույս են ընծայվում պատի թերթեր, կազմակերպվում հայ և արտասահմանյան գրողներին նվիրված գրական-գեղարվեստական ցերեկույթներ, գրքերի ու առանձին ստեղծագործությունների քննարկումներ, ինտելեկտուալ խաղեր, որոնց աշակերտները մեծ սիրով ու ոգևորությամբ են մասնակցում:

Վ. Գրիգորյանը վայելում է ուսուցչական և աշակերտական կոլեկտիվների սերն ու հարգանքը:

Սիրելի՛ գործընկերուհի, դպրոցի ուսուցչական կոլեկտիվը շնորհավորում է քո ծննդյան 50-ամյակը, մաղթում քաջառողջություն, երկար տարիների երջանիկ կյանք, հաջողություններ անձնական կյանքում և աշխատանքում:

Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ

Մեր հաղթանակը կրթությունից, գիտակցությունից և դաստիարակությունից է կախված:

Ալ. Մյասնիկյան

Լրացավ վաստակաշատ մանկավարժ, Մարտունու շրջանի Գիշու միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Լուսաբեր Բաբայանի ծննդյան 60 տարին:

Ծնվել է 1953թ., Գիշի գյուղում, ուսուցչի ընտանիքում: Հայրը՝ Ենոք Բաբայանը, Գիշու միջնակարգ դպրոցի լավագույն ուսուցիչներից էր, նաև ինքնուս երաժիշտ, որն իր երեխաներին ու աշակերտներին դաստիարակում էր մարդկային լավագույն հատկանիշներով:

Լուսաբեր Բաբայանն ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը և առայսօր աշխատում է Գիշու միջնակարգ դպրոցում: Միշտ եռանդուն է ու նվիրված իր գործին, իր ողջ ուժն ու կորովն անշահախնդիր նվիրում է սաներին և ոգևորված ապրում դրանով: Միշտ աչքի է ընկնում աշխատանքային բարձր կարգապահությամբ, պատասխանատվության զգացումը նրա արժանիքներից մեկն է: Բարի է, հոգատար, պահանջկոտ յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ: Շարժուն է, պրպտող, ժրաջան, աշակերտներին սովորեցնելու մտահոգությունը բնավորության գծերից մեկն է:

Դպրոցի ողջ աշխատանքային կոլեկտիվն ի սրտե շնորհավորում է հարգարժան գործընկերոջը՝ 60-ամյա հոբելյանի կապակցությամբ, մաղթում երկար տարիների ուրախ ու երջանիկ կյանք, ստեղծագործական նորանոր հաջողություններ: Ձեզ ուժ, կորով, անսպառ եռանդ և համբերություն՝ Ձեր դժվարին, բայց շնորհակալ աշխատանքում: Թող միշտ փայլի Ձեր լույսը մատաղ սերնդի ապագան տանող ճանապարհին: Միշտ արևի պես ճառագեք անվերջ: Ձեր տեղն ունենաք բոլորի սրտում:

Գիշու միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՎԵՐՋԻՆ ԷՋ

ԱՆՄՈՌԱՑ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ

Գուցե թե խոհերս թղթին չհանձնեի, եթե այս տարի չդասավանդեի 4-րդ դասարանում, որի մայրենիի դասագրքում ամփոփված թեմաները չհամընկնեին արձակուրդներին կազմակերպված շրջագայությանը:

Հուլիսի մեկն էր: Արդեն մեկ ամիս էր՝ 6-րդ դասարանի աշակերտներն իրար հրաժեշտ էին տվել և վայելում էին ամառային արձակուրդը: Դասղեկ Ա. Հարությունյանը հեռախոսազանգով հրավիրեց ծնողական ժողով: Դա հերթական ժողով չէր: Առիթը էքսկուրսիա գնալու հարցն էր: Աշակերտներն իմանալով այդ մասին, մեծ ցնծություն ապրեցին: Նրանք երազում էին լինել Հայաստանի մայրաքաղաքում, ինչպես նաև այն նշանավոր վայրերում, որոնց մասին տեղեկացել էին դասագրքերից: Աշակերտներից ոչ պակաս ոգևորված էինք մենք՝ ծնողներս:

...Առաջին կանգառը Սևանա լճի ափին էր: Հիանալով կապուտաչյա Սևանի գեղեցկությամբ՝ աշակերտները վերհիշեցին «Հայրենի բնաշխարհ» թեման, Գեղամա լեռների մասին հյուսված ավանդազրույցը: Նախաճաշեցինք, լուսանկարվեցինք և շարունակեցինք մեր ճանապարհը:

Կեսօրին, անցնելով Հայաստանի ամենաբարձր կամրջի վրայով, ուղևորվեցինք դեպի Օշական: Այցի գնալով Մ. Մաշտոցի գերեզմանին՝ թարմ ծաղիկներ դրեցինք Մեծ ուսուցչապետի շիրմաքարին, աղոթեցինք: Երեխաները Մաշտոցին նվիրված երգեր երգեցին և արտասանեցին: Այնուհետև եկեղեցում մոմեր վառեցինք՝ մրմնջալով սրտից բխած խոսքեր, լուսանկարվեցինք ու անմոռանալի տպավորություններով շարժվեցինք դեպի Զվարթնոց: Այն, ինչ կարդում ենք գրքերում կամ լսում, այնպես չի տպավորվում, ինչպես տեսնում ենք իրականում: Հիացմունք, զարմանք և հպարտություն ես ապրում, որ զավակն ես նման տաղանդաշատ ժողովրդի:

Ճանապարհն այնուհետև շարունակեցինք դեպի Էջմիածնի Մայր տաճար: Շատ տպավորիչ էր հատկապես տաճարի ներսի թանգարանը: Նախշազարդ աղոթագրքերը, հոգևոր այրերի զգեստները, մյուռոնեփի մեծ կաթսան... Ամեն-ամեն բան հրաշալի էր:

Հետո եղանք Ծիծեռնակաբերդում՝ մեր ժողովրդի ցավը հավերժացնող հուշակոթողում: Ամեն բան այդտեղ ցավ էր հիշեցնում ու նաև ապրելու նոր լիցք հաղորդում: Շատ հուզիչ էր: Երեխաները ծաղիկներ դրեցին Եղեռնի անմեղ զոհերի հուշաքարին:

Այնուհետև եղանք մարգահամալիրում, լուսանկարվեցինք: Երեխաները խաղացին, ճաշեցին, և ճանապարհվեցինք Անկախության հրապարակ: Որքա՜ն գեղեցիկ է երեկոյան Երևանը... Առաջին օրն իր վերջաբանը գտավ Ազատության հրապարակի երգող շատրվանների մոտ: Ուշ գիշեր էր, և թեպետ երկար ճանապարհ էինք անցել, սակայն զմայլվել էինք երգող շատրվանների ցայտերի ու գույների ներդաշնակությամբ, մոռացել հոգնածությունը: Շատ դժվարությամբ բաժանվեցինք և տեղավորվեցինք մեքենայի մեջ, որը մեզ տանում էր Փոքր Վեդի գյուղ: Քիչ անց երեխաները մուշ-մուշ քնած էին՝ հագեցած օրվա բերկրանքը վայելելուց հետո: Լուսաբացին ուղևորվեցինք դեպի Խոր Վիրապ: Առաջին անգամ մեզանից հեռու, բայց այդ-

քան մոտ զգացինք Արարատի շունչը: Հիացանք նրա հպարտ տեսքով: Վանքի խորանում երեխաները մոմեր վառեցին, հրաժեշտ տվեցին վեհաշուք Արարատին, ու շարժվեցինք:

Հետո այցելեցինք Մատենադարան: Երեխաները եղան երկու շենքում էլ՝ հին մատյանների ցուցասրահում, լուսանկարվեցին Մաշտոցի և հայ պատմիչների արձանների դիմաց: Աննկարագրելի տպավորություններով հարստացած՝ ուղղվեցինք դեպի Հովհ. Թումանյանի տուն-թանգարան: Այդքան շատ տեղեկություն և այդպիսի տպավորություն մենք ոչ մի դասագրքից չէինք կարող ստանալ: Անակնկալ էր Հովհ. Թումանյանի հետ «հանդիպումը» եռաչափ տարածությունում: Երեխաները կարծես մի նոր աշխարհ էին տեղափոխվել, Անուշի ու Սարոյի աշխարհը, Գիքորի աշխարհը...

Հաջորդ կանգառը եղավ Հաղբատակի այգում, որտեղ էլ հանդիպում ունեցանք մեր ուղևորության հովանավոր Աիդա Գալստյանի հետ: Ավստրալաբնակ հայուհին իր երգչախմբի անդամների և սեփական նախաձեռնությամբ քարվաճառցիներիս պարգևեց հազվագյուտ հնարավորություն՝ վայելելու Հայաստան աշխարհի անկրկնելի գեղեցկությունները: Խորին շնորհակալություն բոլոր նրանց, ում բարի կամեցողությամբ իրականություն դարձավ մեր շրջագայությունը:

Այդ անմոռաց ճանապարհորդությունն իրականացավ նաև հմուտ վարորդ Գեղամի շնորհիվ, որին նույնպես մեր երախտագիտությունն ենք հայտնում: Ծնողներս վստահ ենք, որ ուսման նկատմամբ երեխաների վերաբերմունքն անպայման կփոխվի, քանի որ նրանք հասկացան, որ հայրենասեր լինելու համար պետք է լիարժեք ճանաչել հայրենիքը:

Ջեմմա ԽԱՉԻԿՅԱՆ

«ԱՐԾՎԱԲԵՐԴԻ» ԵՐԿՐՈՐԴ ԾՆՈՒՆԴԸ՝ ՆՎԵՐ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ

11

Ներկա բեմադրության մեջ սյուժեն նորովի է մեկնաբանվում. նախագծի գեղարվեստական ղեկավար Սարինե Ավքանդիլյանի կողմից լիբրետոյի նոր խմբագրման շնորհիվ օպերան նոր շունչ է ստացել:

Օպերայի դրամատիկ նախերգն ասես նախապատրաստում է հանդիսատեսին դառնալու հետագա լարված գործողությունների ոչ միայն ականատեսը, այլև յուրատիպ մասնակիցը: Եվ դրան տրամադրում են նախևառաջ հիրավի շքեղ երաժշտությունը, դերակատարների փայլուն կատարումներն ու խաղը, Ռեալական ուսումնարանի ավելի քան հարյուրամյա վաղեմության շենքը, որտեղ խավարի ու լույսի, ձայնային ու լուսային զանազան էֆեկտների համադրությունը ստեղծել էր մի խորհրդավոր ու ոգեղեն մթնոլորտ, որը շնչում էր հեղինակի անտես ներկայությամբ: Նուրբ քնարականությունից մինչև հերոսական պաթոս՝ ներառյալ ազգային մեղեդիների հարուստ ներկապնակը - ահա «Արծվաբերդի» բնորոշ յուրահատկությունը: Երրորդ գործողության մեջ տոնախմբության տեսարանը՝ աշուղներով ու ծաղրածուներով, բեմադրության հաջողված դրվագներից է: Հատկապես ծաղրածուի երգիծական և Թորոսի կատակային քառյակներից սահուն ու անկաշկանդ անցումը հայրենասիրական թեմային կարելի է համարել օպերայի ամենաշիկացած պահը՝ գագաթնակետը, երբ աշուղը և ժողովուրդը երգում են ասք Հայրենիքի մասին: Ամեն ինչ այնքան ներդաշնակ էր. երաժշտությունը՝ համահունչ հաղթանակի խորհրդանիշ դարձած Շուշիին, հնչում էր որպես ձոն արցախցու անկոտրում կամքին ու անվեհեր ոգուն: Ի վերջո, չարը պատժվում է ու կործանվում, բարին՝ հաղթանակում:

Արմատներով արցախցի, բեմադրող ռեժիսոր Ժիրայր Դադասյանն առաջին անգամ էր նման ձևաչափով օպերայի բեմադրություն իրականացնում՝ չնայած բացօթյա տարբեր ներկայացումների ու միջոցառումների կազմակերպման ունեցած փորձին: «Օպերային ժանրը ներառում է թատերային բոլոր ուղղությունները՝ երաժշտություն, երգ, դրամատիկ իրավիճակ, պար և այլն: Բնականաբար ունի և իր առանձնահատկությունները, ինչը ստիպում է խորությամբ ուսումնասիրել և պատասխանատվությամբ մոտենալ գործին: Ուրախալին այն է, որ օպերային արվեստի պրոպագանդման միջոցով մենք ոչ միայն վերադարձնում ենք դասական արվեստը, այլև հնարավորություն ենք տալիս նոր սերնդին հաղորդակցվելու այդ արվեստին. և՛ նոր սերունդը, և՛ ավագ սերունդը բարձրարժեք երաժշտության կարիքն ունի: Ես տեսա, զգացի այն

կարոտը, որ հանդիսատեսի մոտ կա դեպի դասական արվեստը»,- ուրախությամբ փաստեց ռեժիսորը: Նա նշեց, որ նախագծի կազմակերպիչները հիմնովին վերանայեցին լիբրետոն և տեղայնացրին՝ համահունչ դարձնելով մեր իրողությանը. «Օրինակ՝ նախկինում կար Լենինին նվիրված արիա, որը տուրք էր ժամանակի պահանջներին, բայց որովհետև չքնաղ երաժշտություն էր, տեքստը փոփոխեցինք և ստացվեց հայրենիքի մասին մի հրաշալի երգ, որը ցնծությամբ ընդունեց հանդիսատեսը: Շատ մեծ փոփոխություններ չեղան, որովհետև սյուժեն ծավալվում է համարյա բոլոր օպերաներին հատուկ սիրային եռանկյունու սյուժետային զարգացումների շուրջ, և մենք փորձեցինք ավելի շատ դա շեշտել»:

Բեմադրությունը, կարելի է ասել, մեկ անգամ ևս Շուշիում մեկտեղեց Հայաստանն, Արցախն ու Սփյուռքը, քանզի հյուրերի թվում շատ սփյուռքահայեր կային: Շուշին նորից ոգեղեն կամուրջ դարձավ հայության տարբեր հատվածների միջև: Ո?վ գիտե, գուցե իրականանան նաև նախագծի կազմակերպիչների ցանկությունն ու մտահղացումը՝ բարերարների ուշադրությունը հրավիրել կիսավեր վիճակում անգամ երբեմնի շքեղությունն ու գեղեցկությունը պահպանած, պատմամշակութային արժեք ունեցող Ռեալական ուսումնարանի շենքի անմխիթար վիճակի վրա: Նրանց և բոլորիս փափագն է՝ տեսնել շենքը վերականգնված՝ որպես կրթական հաստատություն, որպես միջազգային համալսարան, որն իր վեհաշուք ու նորոգ պատերի ներքո կհամախմբեր տաղանդավոր երիտասարդների՝ աշխարհի տարբեր ծայրերից, կդառնար հայության մտավոր ու ինտելեկտուալ ներուժի նորօրյա կաճառ: Մեր տաղանդավոր համերկրացու «Արծվաբերդ» օպերայի արցախյան բեմադրությունը թող դառնա առաջին վստահ քայլը այդ ճանապարհի, իսկ հաջորդ քայլը, հուսանք, առավել շոշափելի կդարձնի օպերային թատրոնի տեսլականն Արցախում:

Մելանյա ՄԻԼՈՆՅԱՆ

ԼՈՒՍԱՐԱՐ
Խմբագիր՝
ՍՎԵՏԼԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

✉ Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru: *www.lusarar.info*

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3150: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 05.09.2013թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: